Украина и Грузия также довольно активно помогают в модернизации определенных видов азербайджанской военной техники. В частности, на Тбилисском авиационном заводе ремонтировались штурмовики Су-25 азербайджанских ВВС, а на 142-м танкоремонтном заводе, который достался Грузии после начала вывода оттуда российских войск, ремонтируются азербайджанские танки и БМП. Аналогичный ремонт азербайджанской военной техники производится на предприятиях военно-промышленного комплекса Украины. В последние годы активизировалось также ВТС с Беларусью. В частности, там осуществляются закупки значительного количества танков Т-72, а также ведутся работы по созданию с участием белорусской стороны танкоремонтного завода в Азербайджане.

В то же время можно отметить существенную особенность структуры импорта ВВТ Азербайджаном в последние годы. Как уже отмечалось, в значительной мере это оружие наступательного действия: танки Т-72, крупнокалиберные 300-мм РСЗО «Смерч» и тяжелая артиллерия. В частности, в 2002г. Азербайджаном в Болгарии были закуплены 36 130-мм орудий, которые до принятия в 1970-х гг. на вооружение Советской Армией 152-мм систем 2А36 «Гиацинт» считались наиболее дальнобойными орудиями советской полевой артиллерии. 130-мм орудия, вместе с их более современными аналогами – «Гиацинтами», представляют значительную опасность, т.к. могут весьма эффективно использоваться ВС Азербайджана при прорыве оборонительных позиций Армии обороны НКР, контрбатареинной борьбы, ударов по крупным населенным пунктам и т.д. Еще большую военную и не меньшую психологическую значимость (при использовании против крупных населенных пунктов Армении и НКР) в случае возобновления боевых действий могут иметь РСЗО «Смерч», обладающие значительной поражающей мощностью и высоким коэффициентом попадания.

Определенное влияние на общую милитаризацию Азербайджана может оказать также создание в конце 2005г. отдельного министерства оборонной промышленности. В то же время некоторые азербайджанские эксперты утверждают, что в условиях сложности производства современных видов вооружения и технологической неразвитости азербайджанской экономики, данное министерство в реальности будет заниматься не производством в самом Азербайджане ВВТ, а координировать его закупки в других странах<sup>1</sup>.

Согласно официальным данным, предоставленными государствами Южного Кавказа в рамках механизмов ДОВСЕ, Венского документа ОБСЕ и Регистра обычных вооружений ООН, а также экспертным оценкам ведущих мировых аналитических центров, военный потенциал Азербайджана на начало 2006г. был следующим:

- Численность личного состава – 56 840 чел.
- Военный бюджет – \$310 млн (1, 48 трлн манатов).
- Иностранная военная помощь (США) – \$8,68 млн.

Организационно-штатная структура ВС Азербайджана – 5 штабов армейских корпусов, 23 мотострелковые бригады, 1 артиллерийская бригада, 1 бригада РСЗО<sup>2</sup>, 1 противотанковый артиллерийский полк, 1 истребительная авиационная эскадрилья, 1 истребительно-бомбардировочный авиационный полк, 1 вертолетный полк, транспортные и тренировочные авиационные эскадрильи.

<sup>1</sup> Азербайджан демонстрирует серьезность намерений // [www.day.az](http://www.day.az), 27.12.2005.

<sup>2</sup> РСЗО – реактивные системы залпового огня.

Таблица 1.

Официальное количество ВВТ в ВС Азербайджана<sup>1</sup>

Категория	Тип ВВТ	Количество
Боевые танки	Т-55	98
	Т-72	119
<b>Всего:</b>		<b>217</b>
ББМ	БМП-1	40
	БМП-2	39
	БМП-3	1
	БРМ-1к	21
	БМД-1	20
	БТР-60	23
	БТР-70	24
	БТР-80	11
<b>Всего:</b>		<b>185<sup>2</sup></b>
Артиллерийские системы	152-мм пушка 2А36 «Гиацинт»	16
	152-мм гаубица Д-20	24
	152-мм самоходная гаубица 2С3 «Акация»	12
	130-мм пушка М-46	36
	122-мм гаубица Д-30	80
	120-мм миномет П-38	80
	300-мм РСЗО 9А52 «Смерч»	1
<b>Всего:</b>		<b>44</b>
	122-мм РСЗО БМ-21	<b>260</b>
Боевые самолеты	Миг-21	5
	Миг-25	32
	Су-17	5
	Су-24	5
	Су-25	15
<b>Всего:</b>		<b>62</b>
Ударные вертолеты	Ми-24	<b>15</b>
Вертолеты боевого обеспечения	Ми-8	<b>13</b>

Таблица 2.

## Импорт Азербайджаном ВВТ согласно Регистру ООН в 2005г.

Категория	Государство-экспортер	Тип ВВТ	Количество
БТ	Украина	Т-72	25
	Беларусь	Т-72	19 <sup>3</sup>
<b>Всего:</b>			<b>44</b>
ББМ	Украина	БМП-1	<b>2</b>
Артиллерийские системы	Украина	300-мм РСЗО «Смерч»	11
	Украина	120-мм миномет	72
<b>Всего:</b>			<b>83</b>
Боевые самолеты	Грузия	Су-25	6
		Су-25УБ	1
<b>Всего:</b>			<b>7</b>

<sup>1</sup> Без военно-морских судов и катеров.<sup>2</sup> Еще 194 ББМ (в том числе 168 БМП) находятся на вооружении внутренних войск и пограничных войск Азербайджанской Республики.<sup>3</sup> В азербайджанской печати появились сведения, что якобы количество закупленных в Беларуси танков составляло 270 единиц, что, однако, представляется маловероятным.



*Иностранные военные базы и объекты на территории Азербайджана*

- Габалинская радиолокационная станция Системы раннего предупреждения о ракетном нападении (Российская Федерация) – РЛС системы «Дарьял» – до 1000 человек личного состава ВС РФ
- 2 РЛС (США) – до 50 американских военных специалистов.
- Военные аэродромы (США) – предположительно переоборудовано до 7 аэродромов, на которых находится определенное количество американских военнослужащих обеспечения и охраны.

*Сергей Минасян*

## ԱՄՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻՆ Վիճակագրական վերլուծություն

### «Ազատության աջակցման մասին» ակտը

1992թ. ապրիլի 1-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց այսպես կոչված «Ազատության աջակցման մասին» ակտը (*“Freedom support act”*), որտեղ հստակորեն սահմանվում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը հետխորհրդային պետությունների նկատմամբ: Փաստաթղթում մասնավորապես նշվում էր. «*Խորհրդային Միության փլուզումը ԱՄՆ ղեկավարությանը հնարավորություն է ընձեռում տարածել ժողովրդավարության սկզբունքներն ու ազատության չափանիշները Ռուսաստանի ու Եվրասիայի տարածքներում՝ տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացնելով տնտեսական գործարքներ ու ներդրումներ*»: Ըստ ծրագրի, պաշտոնական Վաշինգտոնը հետխորհրդային երկրների համար նախատեսում էր հատկացնել հումանիտար օգնություն՝ ապահովելով հետխորհրդային պետությունների բնակչությանը սննդով ու դեղորայքով, ստեղծել ազատ շուկայական տնտեսություն, զարգացնել հետխորհրդային պետությունների մասնավոր սեկտորը: Ստորև ներկայացված են այդ օգնության վիճակագրական տվյալները:

*2002-2006թթ. ԱՄՆ կառավարական ֆինանսական աջակցությունը Հարավային Կովկասում՝  
ըստ ուղղորդվող ծրագրերի, \$մլն*

Երկիր	Ժողովրդավարություն	Սոցիալ-տնտես. բարեփոխումներ	Անվտանգություն/ օրենքի կիրառում	Հումանիտար օգնություն	Միջանկյալ
<b>2002թ.</b>					
Հայաստան	27.8	31.1	10.2	5.1	28.8
Ադրբեջան	15.9	10.2	13.6	12.7	2.5
Վրաստան	23.5	30.1	31.7	13.4	4.5
<b>2003թ.</b>					
Հայաստան	22.4	46.8	18.4	7.1	11.8
Ադրբեջան	16.2	15.4	13.2	18.5	5.2
Վրաստան	20.4	26.1	41.4	15.1	7.4
<b>2004թ.</b>					
Հայաստան	13	50.2	15.4	6.3	4.8
Ադրբեջան	12	13.6	11.3	27.1	3.5
Վրաստան	14.4	35.5	38.5	9.9	3.8
<b>2005թ.</b>					
Հայաստան	11.4	43.5	19.1	1.5	8.9
Ադրբեջան	9.7	13.9	31.1	12.2	3.6
Վրաստան	14.9	44.5	71.7	4.9	2.9
<b>2006թ.</b>					
Հայաստան	16	41.3	12.2	1.6	5.3
Ադրբեջան	10.3	22.7	23.3	3.7	1.5
Վրաստան	12.4	34.4	30.5	4.9	3.4

*1996-2006թթ. ԱՄՆ կառավարական ֆինանսական ընդհանուր աջակցությունն  
ըստ հարավկովկասյան երկրների, \$մլն*

Երկիր	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	85	95	87.5	80.1	102.6	89.8	103	106.5	89.7	84.4	76.5
Ադրբեջան	12	16.4	34.3	35.2	32	34.3	54.9	68.5	67.5	70.5	61.5
Վրաստան	22	26.8	97.5	84.6	108.5	91.8	103	110.4	102.1	138.9	85.6
Հարավային Կովկաս	<b>119</b>	<b>138.2</b>	<b>219.3</b>	<b>199.9</b>	<b>243.1</b>	<b>215.9</b>	<b>260.9</b>	<b>285.4</b>	<b>259.3</b>	<b>293.8</b>	<b>223.6</b>

Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, 1996-2001թթ. ընկած ժամանակահատվածում Ադրբեջանին հատկացված ամերիկյան կառավարական աջակցության ցուցանիշները, որպես կանոն, զգալիորեն զիջել են հարավկովկասյան մյուս երկու հանրապետությունների արձանագրած արդյունքներին: Մա գերազանցապես պայմանավորված է 1992թ. հոկտեմբերի 24-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության աջակցման մասին» ակտի 907-րդ հոդվածի կիրառմամբ: Որոշումը հաստատում է, որ Ադրբեջանը Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սահմանել է տրանսպորտային շրջափակում, ուստի արգելում է Ադրբեջանին տրամադրել ուղղակի կառավարական օգնություն՝ ներառյալ ռազմական ոլորտը: 907-րդ հոդվածում մասնավորապես նշվում է, որ Ադրբեջանի կողմից «Հարավային Կովկասի հայկական համայնքների» դեմ ամերիկյան օգնության օգտագործումն անթույլատրելի է:

Ելնելով ԱՊՀ տարածքում և մասնավորապես հարավկովկասյան տարածաշրջանում ունեցած քաղաքական, ռազմավարական և տնտեսական նշանակության շահերից՝ պաշտոնական Վաշինգտոնը, այնուհանդերձ, փորձում է շրջանցել 907-րդ հոդվածը և Ադրբեջանին հատկացնում է հումանիտար ու կառավարման «առաքելության» օգնություն: 2001թ. սեպտեմբերի 11-ի դեկրետից հետո իրավիճակը որոշակիորեն փոխվեց (դա երևում է նաև վիճակագրական ցուցանիշներից դատելով): Մասնավորապես Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևն իր լիակատար աջակցությունը հայտնեց Աֆղանստանի դեմ ամերիկյան օդային հարվածներին, դեռ ավելին, նա առաջարկեց Վաշինգտոնին օգտագործել իր երկրի օդային տարածքը՝ դեպի Կենտրոնական Ասիա գործերի փոխադրման նպատակով: Արդյունքում պաշտոնական Վաշինգտոնը որոշակիորեն «վերանայեց» իր հարավկովկասյան քաղաքականությունը. 2002թ. հունվարին ԱՄՆ Կոնգրեսում կրկին քննարկման առարկա դարձավ 907-րդ հոդվածը, որի պահպանմանը կողմ քվեարկեցին 53, դեմ՝ 45 սենատորներ: Այնուհանդերձ, ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը 2002թ. հունվարի 25-ին ոչ թե վերացրեց, այլ ուղղակի դադարեցրեց 907-րդ հոդվածը մեկ տարի ժամանակով, իսկ 2004թ. սկզբին երկարաձգեց 907-րդ հոդվածի պատժամիջոցի դադարեցման մասին հրամանը՝ հիմնավորելով իր որոշումը միջազգային ահաբեկչության պատերազմով, Ադրբեջանի սահմանների պահպանությամբ և որ պատժամիջոցի դադարեցումը «չի խզի ու չի սառեցնի Հայաստանի ու Ադրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերման աշխատանքները, իսկ տրամադրվող օգնությունը չի օգտագործվի Հայաստանի դեմ հարձակողական նպատակների համար»:

Պաշտոնական Վաշինգտոնը ֆինանսական ծրագրեր է իրականացնում նաև Լեռնային Ղարաբաղում: Միջոցները հիմնականում հատկացվում են հումանիտար առաքելությամբ: 2002թ. կեսերին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվող ֆինանսական աջակցության ծրագիրը՝ կազմելով \$19.8 մլն հումանիտար օգնություն: Ծրագրի միջոցներն ուղղվելու էին ոչ թե այն ոլորտներին, որոնք նպաստում են Լեռնային Ղարաբաղի տնտեսության զարգացմանը, այլ ներդրվելու էին հանրապետության տների վերակառուցման, բնակչության առողջական վիճակի բարելավման, ջրմուղ ցանցի արդիականացման ոլորտներում: Իսկ 2004թ. նոյեմբերի վերջին ԱՄՆ Սենատի կողմից «Արտաքին աջակցման մասին» ամենամյա օրենքի շրջանակներում 2005թ. նախատեսվում էր ԼՂՀ-ին հատկացնել և՛ ս \$3 մլն հումանիտար օգնություն:

**ԱՄՆ ՌԱԶՄԱԿԱՆ/ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. 2000-2007թթ.<sup>1</sup>**

*Աղյուսակ 1. ԱՄՆ ռազմական ֆինանսական աջակցությունը Հայաստանին 2000-2007թթ., \$հազ.*

Ծրագիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Արտաքին ռազմական աջակցություն/ FMF	--	--	4.000	3.000	2.485	7.936	3.960	3.500
Ուսուցում և զինում/IMET	--	--	400	750	869	819	743	790
Չտարածում,ակնազերծում/հակա- ահաբեկչ./NADR-ATA	--	--	--	--	--	332	165	1.000
Զենքի արտահանման վերահսկում և սահմանային անվտանգ./NADR-EXBS	--	1.000	870	1.850	300	300	700	1.040
Ակնազերծում/NADR-HD	300	850	1.200	750	--	--	--	--
Խաղաղության կորպուս/Peace Corps	1.397	1.343	1.331	1.333	1.604	1.678	1.882	1.814
P.L. 480 Title II <sup>2</sup>	--	742	--	--	--	1.098	--	--
<b>Ընդհանուր</b>	<b>1.697</b>	<b>3.935</b>	<b>7.801</b>	<b>7.683</b>	<b>5.258</b>	<b>12.163</b>	<b>7.450</b>	<b>8.144</b>

*Աղյուսակ 2. ԱՄՆ ռազմական ֆինանսական աջակցությունը Ադրբեջանին 2000-2007թթ., \$հազ.*

Ծրագիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Արտաքին ռազմական աջակցություն/ FMF	--	--	4.000	3.000	2.485	7.936	3.960	4.500
Ուսուցում և զինում/IMET	--	--	377	750	1.084	879	743	885
Չտարածում,ակնազերծում/հակա- ահաբեկչ./NADR-ATA	--	--	--	--	--	808	400	948
Զենքի արտահանման վերահսկում և սահմանային անվտանգ./NADR-EXBS	100	500	4.100	1.850	600	1.545	1.650	1.405
Ակնազերծում/NADR-HD	500	850	1.200	1.380	2.468	3.500	2.800	2.500
Թեթև սպառազինություն/NADR-SALW	--	--	--	--	--	400	--	--
Խաղաղության կորպուս/Peace Corps	--	--	--	1.223	1.326	1.440	1.794	1.883
Խաղաղապահ զործող./PKO	--	--	1.000	--	--	--	--	--
P.L. 480 Title II	--	--	--	--	2.883	1.545	1.939	--
<b>Ընդհանուր</b>	<b>600</b>	<b>1.350</b>	<b>10.677</b>	<b>8.203</b>	<b>10.846</b>	<b>18.053</b>	<b>13.286</b>	<b>12.121</b>

*Աղյուսակ 3. ԱՄՆ ռազմական ֆինանսական աջակցությունը Վրաստանին 2000-2007թթ., \$հազ.*

Ծրագիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Արտաքին ռազմական աջակցություն/ FMF	3.000	4.478	31.000	7.000	12.000	11.904	11.880	10.000
Ուսուցում և զինում/IMET	409	475	889	1.200	1.228	1.413	1.200	1.235
Չտարածում,ակնազերծում/հակա- ահաբեկչ./NADR-ATA	--	--	--	--	--	941	1.804	1.014
Զենքի արտահանման վերահսկում և սահմանային անվտանգ./NADR-EXBS	--	--	--	--	--	--	--	2.000
Ակնազերծում/NADR-HD	27	1.000	1.100	1.100	1.500	3.000	950	1.500
Թեթև սպառազինություն/NADR-SALW	--	--	--	--	--	405	650	--
Խաղաղության կորպուս/Peace Corps	334	1.118	1.182	1.404	1.525	1.656	1.799	1.944
Խաղաղապահ զործող./PKO	--	--	340	--	3.000	--	--	--
P.L. 480 Title II	--	--	--	--	2.974	1.594	1.406	--
<b>Ընդհանուր</b>	<b>3.770</b>	<b>7.071</b>	<b>34.511</b>	<b>10.704</b>	<b>22.227</b>	<b>20.913</b>	<b>19.689</b>	<b>17.693</b>

*Աղյուսակ 4. Ընդհանուր վիճակագրություն, \$հազ.*

<sup>1</sup> Վիճակագրությունը հիմնված է ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնական ամենամյա հաշվետվությունների և տեղեկատվական այլ աղբյուրների վրա նշենք, որ այդ զեկույցներում ներկայացված վիճակագրությունը գերծ չէ որոշակի, ոչ ըստ էության թվային անճշտություններից):

<sup>2</sup> Public Law 480; Title II - «Անհրաժեշտ սննդի աջակցություն» որոշումը, որի երկրորդ կետը (Title II) նախաձեռնում ու ֆինանսավորում է ԱՄՆ Զարգացման միջազգային գործակալությունը (USAID):

Երկիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	1.697	3.935	7.801	7.683	5.258	12.163	7.450	8.144
Ադրբեջան	600	1.350	10.677	8.203	10.846	18.053	13.286	12.121
Վրաստան	3.770	7.071	34.511	10.704	22.227	20.913	19.689	17.693

***Նկատառումներ***

«Արտաքին ռազմական աջակցություն» ծրագիրը նախատեսում է ՆԱՏՕ-ին նոր անդամակցած պետությունների՝ կազմակերպությանը ներգրավմանն ու ինտեգրմանը, նպաստում այն երկրներին, որոնք ձգտում են անդամակցել Հյուսիսատլանտյան դաշինքին, ինչպես նաև աջակցություն ցուցաբերում Աֆղանստանում և Իրաքում գտնվող կռախիցիոն այլ գործընկերներին: Բացի այդ, ռազմական ծրագրի ֆինանսական միջոցներն ուղղվում են այդ թվում և Կենտրոնական Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներին ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (*Partnership for Peace*) ծրագրի շրջանակներում՝ նպաստելով այդ պետությունների պաշտպանական բարեփոխումներին, ՆԱՏՕ-ին անդամակցության, գործընկերության և անհատական համագործակցության ծրագրերի իրականացման հարցերում:

**Ուսուցում և զինում** ծրագիրը Եվրոպայում և Եվրասիայում ԱՄՆ ռազմավարական շահերի առաջնորդման հիմնական միջոցներից մեկն է, որը նախատեսում է մի շարք ռազմական միջոցառումներ, ինչպես, օրինակ, ռազմական պրոֆեսիոնալիզմի ապահովում, խաղաղապահ զորամիավորումների վերապատրաստում, հակաահաբեկչության դեմ պայքար և այլն:

***Հասպակումներ, անգլ.***

**PKO** - Peacekeeping Operations

**IMET** -International Military Education Training

**FMF** - Foreign Military Financing

**NADR** - Nonproliferation, Anti-terrorism, Demining, and Related Programs

**NADR-EXBS** - Export Control and Related Border Security Assistance (EXBS) program funded through the Nonproliferation, Anti-terrorism, Demining, and Related Programs-NADR

**NADR-ATA** - Anti-Terrorism Assistance

**NADR-HD** - Humanitarian Demining Program

**NADR-SA/LW** - Small Arms and Light Weapons

**P.L. 480 Title II** - Public Law 480, Food For Peace Program

***Կարեն Վերանյան  
«Նորավանք» հիմնադրամ***

## **ԹՈՒՐՔՄԵՆՏԱՇՈՒ ՄԱՀՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ՇՈՒՐՁ**

Թուրքմենական պաշտոնական լրատվամիջոցների հաղորդմամբ, 2006թ. դեկտեմբերի 21-ի գիշերը սրտային անբավարարվածությունից իր մահկանացուն կնքեց 1999թ. այդ երկրի ցմահ նախագահ հռչակված Սափարուրադ Նիյազովը: Հաշվի առնելով ներկայումս միջազգային համակարգում սրվող էներգետիկ անվտանգության խնդիրը՝ բնական գազի զգալի պաշարներ ունեցող Թուրքմենստանի նախագահի (որի անձով էր, փաստորեն, սահմանափակվում այդ երկրում որոշումների կայացման մեխանիզմը) մահը չի կարող իր ազդեցությունը չթողնել միջազգային էներգետիկ, հետևաբար՝ քաղաքական զարգացումների վրա: Հիմնական հարցն է, թե ինչ նոր զարգացումների պատճառ կհանդիսանա «թուրքմենների հոր»<sup>1</sup> մահը:

### **Թուրքմենստանի էներգետիկ պաշարները**

Ըստ էության, աշխարհում ոչ մի երկիր չի հրապարակել իր տարածքում առկա նավթի ու բնական գազի պաշարների իրական թվերը: Օբյեկտիվ պատճառն այն է, որ ժամանակի ընթացքում շնորհիվ հաշվարկի նոր մեթոդների ու նոր հետազոտությունների էներգապաշարների թվերն անընդհատ փոխվում են:

Մուրյեկտիվ պատճառները հիմնականում երկուսն են: Նավթի ու գազի արդյունահանմամբ զբաղվող հատկապես անդրազգային կորպորացիաները միշտ էլ ձգտել են արհեստականորեն նվազեցնել աշխարհում առկա այդ էներգակիրների ծավալների թվերը՝ նպատակ ունենալով բարձր պահել դրանց միջազգային գները<sup>2</sup>: Իսկ մյուս կողմից՝ նավթի ու բնական գազի պաշարների տիրապետող պետությունները փորձում են հնարավորինս բարձր ներկայացնել այդ թվերը՝ խնդիր ունենալով մեծացնել սեփական տնտեսական ու աշխարհաքաղաքական նշանակությունը միջազգային համակարգում:

Համաձայն *British Petroleum* ընկերության պատրաստած *BP Statistical Review of World Energy* վերջին զեկույցի, 2005թ. ավարտին Թուրքմենստանն ուներ 2.9 տրիլիոն խորանարդ մետր բնական գազի (կամ աշխարհի բնական գազի ապացուցված պաշարների 1.6%-ը՝ զբաղեցնելով 12-րդ տեղը) և 500 մլն բարել նավթի (կամ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 0.05%-ից էլ քիչ) պաշարներ:

2002թ. *Asian Development Bank*-ի աջակցությամբ Թուրքմենստանը ձեռնամուխ եղավ իր գազային պաշարների անկախ աուդիտի անցկացմանը: Արդյունքները չհրապարակվեցին, սակայն որոշ ժամանակ անց միջազգային մամուլ սպրդեցին տեղեկություններ, թե ըստ այդ աուդիտի՝ Թուրքմենստանի բնական գազի պաշարները անցնում են 6 տրիլիոն խորանարդ մետրը:

Պաշտոնական Աշգաբադն ունի իր թվերը: 2006թ. ապրիլին Չինաստան կատարած այցելության ժամանակ Թուրքմենբաշին հայտարարեց, թե իր երկրի բնական գազի պաշարները կազմում են մոտ 22 տրիլիոն խորանարդ մետր, իսկ նավթինը՝ շուրջ 2 մլրդ բարել: Ավելի լուրջ պետք է համարել 2006թ. նոյեմբերի 2-ին Թուրքմենստանի նախագահի հայտա-

<sup>1</sup> Թուրքմենբաշի՝ թուրքմենների հայր, թուրքմենների գլուխ տիտղոսը Սափարուրադ Նիյազովն ընդունեց 1993թ.: Սակայն մինչ այդ լրջորեն քննարկվում էր Աթաթուրք (թուրքերի հայր) տարբերակը: Վերջինս չընդունվեց գլխավորապես այն պատճառով, որ պաշտոնական Անկարան սպառնաց խզել դիվանագիտական հարաբերությունները:

<sup>2</sup> 1970-ական թթ. վերջին միջազգային ամենաեղիմասկավոր գնահատականների համաձայն, *OPEC* անդամ երկրների նավթի պաշարները կազմում էին մոտ 412 մլրդ բարել: Սկսած այդ պահից մինչև այսօր *OPEC*-ի մաս կազմող պետություններում արդյունահանվել է շուրջ 307 մլրդ բարել նավթ: Մինչդեռ, ըստ *British Petroleum* ընկերության կողմից ամեն տարի պատրաստվող *BP Statistical Review of World Energy* զեկույցի (վերջինը հրապարակվել է 2006թ. հունիսին), *OPEC* անդամ երկրների նավթի պաշարները 2005թ. վերջին կազմում էին 902.4 մլրդ բարել կամ աշխարհի նավթի ապացուցված պաշարների 75.2%-ը:

բարությունը՝ երկրի հարավ-արևելքում գտնվող «Հարավային Յոլոտան» հանքավայրում 7 տրիլիոն խորանարդ մետր բնական գազի պաշարների հայտնաբերման մասին: Եթե հրապարակվածը համապատասխանում է իրականությանը, ապա բնական գազի պաշարներով Թուրքմենստանը կարող է դառնալ աշխարհում չորրորդ երկիրը՝ Ռուսաստանից (ավելի քան 47.8 տրիլիոն խորանարդ մետր բնական գազի պաշարներ), Իրանից (26.7 տրիլիոն խորանարդ մետր) ու Կատարից (25.7 տրիլիոն խորանարդ մետր) հետո:

### **Թուրքմենական գազի նշանակությունը**

Թուրքմենստանի շուրջ ընթացող զարգացումներն ուղղակիորեն առնչվում են նաև ԱՄՆ-Ռուսաստան և ԵՄ-Ռուսաստան հարաբերություններին, ինչպես նաև Իրանի ու Կենտրոնական Ասիայի շուրջ ընթացող գործընթացներին:

*BP Statistical Review of World Energy* զեկույցի համաձայն, 2005թ. ընթացքում Ռուսաստանն ապահովել է Եվրամիության բնական գազի սպառման ավելի քան 32%-ը՝ մոտ 151.28 մլրդ խորանարդ մետր: Ըստ որոշ հաշվարկների՝ Եվրոպան սեփական էներգակարողությունների ամենից սուր պակաս է զգալու 2015թ. շրջանում, երբ ստիպված է լինելու օգտագործել մոտ 70%-ով ներմուծվող նավթ ու գազ: Հետևաբար, առաջիկայում Ռուսաստանից դեպի ԵՄ հոսող գազի ծավալները միայն աճելու են՝ արդեն եղած կանխատեսումների համաձայն, 2011թ. հասնելով 180 մլրդ խորանարդ մետրի:

Մյուս կողմից՝ ռուսական աղբյուրների մատուցմամբ, նույն 2011թ. դրությամբ բնական գազի սպառման Ռուսաստանի տարեկան պահանջը կաճի մոտ 15 մլրդ խորանարդ մետրով՝ հասնելով մոտավորապես 420 մլրդ խորանարդ մետրի: Հաշվի առնելով դեպի ԵՄ, ԱՊՀ երկրներ հոսող ռուսական բնական գազի ծավալների առաջիկա աճը, ինչպես նաև դեպի Չինաստան, Հարավային Կորեա ու Ճապոնիա գալիք տարիներին ծրագրվող մատակարարումները՝ «Գազպրոմը» կարող է բախվել լուրջ խնդիրների: Հռոտեսական գնահատականների համաձայն, 2010թ. բնական գազի ռուսական մենատերը կունենա տարվա կտրվածքով մոտ 100 մլրդ խորանարդ մետր գազի պակասորդի խնդիր, որպեսզի կարողանա կատարել արտերկրի առջև ստանձնած պարտավորությունները և միաժամանակ բավարարել բնական գազի սպառման ներքին կարիքները:

Թեև այդ խնդրի լուծման համար Ռուսաստանը պատրաստվում է սկսել գազի նոր հանքավայրերի շահագործում կամ մեծացնել արդեն շահագործվող հանքավայրերից ստացվող գազի ծավալները<sup>1</sup>, սակայն լուրջ խնդիր են ներկայացնում անհրաժեշտ ժամանակի ընթացքում համապատասխան ենթակառուցվածք ստեղծելու «Գազպրոմի» ֆինանսական ու տեխնիկական կարողությունները: «Գազպրոմը» պարզապես կարող է չհասցնել:

Հետևաբար, զգալիորեն աճում է խնդրի լուծման մյուս տարբերակի նշանակությունը: Ղազախստանը, Ուզբեկստանն ու Թուրքմենստանը այն միակ երկրներն են, որոնցից «Գազպրոմը» բնական գազ է ներմուծում: 2006թ. ներմուծված մոտ 60 մլրդ խորանարդ մետր գազի շուրջ 70%-ը կազմում էր թուրքմենականը: Պատահական չէ, որ բնական գազի ռուսական մենատերը ստիպված էր 2006թ. սեպտեմբերի 5-ին Թուրքմենստանի հետ կնքել նոր պայմանագիր, ըստ որի՝ հազար խորանարդ մետր թուրքմենական գազի դիմաց «Գազպրոմը» պետք է վճարի \$100՝ նախկին \$65-ի փոխարեն<sup>2</sup>:

<sup>1</sup> 2006թ. աշնանը ակտիվորեն շրջանառության մեջ մտած Բարենցի ծովում գտնվող ռուսական «Շտոկման» գազահանքի հարցը նպատակ ունի նաև ի ցույց դնել այդ խնդրի լուծմանն ուղղված Ռուսաստանի կարողությունները: Ըստ փորձագիտական գնահատականների՝ «Շտոկմանում» կա 3.7 տրիլիոն խորանարդ մետր գազ:

<sup>2</sup> Ըստ այդ պայմանագրի՝ Ռուսաստանը 2006թ. ընթացքում ձեռք բերեց ևս 12 մլրդ խորանարդ մետր գազ, իսկ 2007-2009թթ.՝ երեք տարվա ընթացքում, տարեկան ձեռք է բերելու 50 մլրդ խորանարդ մետր գազ՝ ընդհանուր առմամբ վճարելով \$16.2 մլրդ: Այդ պայմանագիրը եկավ փոխարինելու 2003թ. ապրիլի 10-ի պայմանագրին, ըստ որի 25 տարվա ընթացքում Ռուսաստանը Թուրքմենստանից պետք է գներ մոտ 2 տրիլիոն խորանարդ մետր գազ՝ հազար խորանարդ մետրի դիմաց վճարելով \$44 (թուրքմենական կողմի պահանջով 2006թ. սկզբից «Գազպրոմը» սկսեց վճարել \$65): 2003թ. պայմանագրով 2009-ից Թուրքմենստանը պետք է տարեկան Ռուսաստանին մատակարարեր 80 մլրդ խորանարդ մետր գազ, իսկ արդեն հաջորդ տարվանից՝ 100 մլրդ խորանարդ մետր:

## Մրցակցություն թուրքմենական գազի համար

Թուրքմենստանը գազը վաճառում է ոչ միայն Ռուսաստանին: Դեռևս 1997թ. շարք մտած մոտ 200 կմ-ոց «Կոպեդե»-Կուրտ-Կուի գազամուղով<sup>1</sup> Թուրքմենստանը տարեկան Իրանին է մատակարարում 8 մլրդ խորանարդ մետր բնական գազ: 2005թ. սեպտեմբերին ավարտվեց ճնշակային (կոմպրեսորային) նոր կայանի շինարարությունը, որը թույլ կտա նշված գազամուղով Իրանին վաճառվող գազի տարեկան ծավալները հասցնել 14 մլրդ խորանարդ մետրի: 2006թ. փետրվարին Ազգաբաղում թուրքմենա-իրանական համապատասխան պայմանագրերի կնքումով նախատեսվում է այդ ծավալի մատակարարումներ սկսել արդեն 2007թ.:

Մակայն իրանական կողմի ծրագրերն այդքանով չեն սահմանափակվում: Թեհրանում առկա նախագծի համաձայն, Թուրքմենստանի հարավ-արևելքում գտնվող գազի հիմնական հանքավայրերից Իրանով դեպի Թուրքիա տանող 1 420 մմ-ոց տրամագիծ ունեցող և մոտ 1400 կմ-ոց գազատարի կառուցման պարագայում թուրքմենական գազը կարող է հասնել դեպի Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը: Ըստ նախնական հաշվարկների՝ գազամուղի շինարարությունը կարժենա մոտ \$2.1 մլրդ, և տարեկան այն կարող է մատակարարել 28 մլրդ խորանարդ մետր գազ<sup>2</sup>: Մի ժամանակ նախագծով հետաքրքրված էին *Royal Dutch/Shell* և *Gaz de France* ընկերությունները:

2006թ. ապրիլի 3-ին Պեկինում այդ երկրի նախագահ Հու Չինտաոյի ու վեցօրյա պետական այցով Չինաստանում գտնվող Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովի միջև կնքվեց գազային ու նավթային ոլորտում համագործակցության մասին պայմանագիր: Ըստ այդ պայմանագրի, 2009-ից 30 տարվա ընթացքում Թուրքմենստանը պետք է Չինաստանին տարեկան մատակարարի 30 մլրդ խորանարդ մետր բնական գազ: Նախատեսվում է, որ Թուրքմենստանը Չինաստանին կապող մոտ 7 հազ. կմ-ոց և \$10 մլրդ արժեցող գազամուղի շինարարությունը կավարտվի 2009թ. հունվարին<sup>3</sup>:

Հատկապես 2006թ. աշնանը էներգետիկ խնդրում Ռուսաստանի ու Եվրամիության միջև սրված հակասություններից հետո եվրոպական դիվանագիտությունը սկսեց ավելի լուրջ ուշադրություն դարձնել Կենտրոնական Ասիային: 2006թ. հոկտեմբերի 20-ին ֆինլանդական Լախտի քաղաքում կայացած ԵՄ-Ռուսաստան էներգետիկ ոչ ֆորմալ գազաթաժողովում Մոսկվայի նկատմամբ եվրոպական կողմի հիմնական պահանջը վերաբերում էր Ռուսաստանի տարածքով էներգակիրների կենտրոնաասիական շուկա ազատ մուտքի ապահովմանը, ինչը, եվրոպացիների պատկերացմամբ, պետք է նվազեցնի ռուսական գազից ու նավթից Եվրոպայի կախվածությունը: Ինչպես հայտնի է, գազաթաժողովի արդյունքում Ռուսաստանը հրաժարվեց վավերացնել այդ դրույթը պարունակող ԵՄ հետ դեռևս 1991թ. կնքված «էներգետիկ խարտիան»:

2007թ. հունվարի 1-ից Եվրամիության նախագահությունը ստանձնած Գերմանիան էներգետիկ անվտանգությունը դարձրել է ԵՄ արտաքին օգնակցության առաջնահերթություններից մեկը: Դա պատահական չէ. ԵՄ առաքվող ռուսական գազի ավելի քան 24%-ը բաժին է հասնում միայն Գերմանիային, և այդ թիվը գնալով աճելու է՝ հատկապես, երբ 2010թ. շարք մտնի Բալթիկ ծովի հատակով Ռուսաստանը Գերմանիային կապող «Հյուսիսային հոսք» գազամուղը:

Որպես այլընտրանքային՝ Ռուսաստանը շրջանցող տարբերակ Եվրամիությունը ձգտում է կյանքի կոչել Կենտրոնական Ասիան Կասպիցով, Ադրբեջանով, Վրաստանով,

<sup>1</sup> Գազամուղը, որի շինարարությունն արժեցել է մոտ \$190 մլն, իրար է կապում Թուրքմենստանի հարավ-արևմուտքում գտնվող «Կոպեդե» գազահանքը և իրանական Կուրտ-Կուի քաղաքը:

<sup>2</sup> Համեմատության համար նշենք, որ Բալթիկ ծովի հատակով Ռուսաստանը Գերմանիային կապող «Հյուսիսային հոսք» գազամուղի կառուցման առաջին փուլի ավարտից (2010թ.) հետո Ռուսաստանը կարող է տարեկան Գերմանիա առաքել 27.5 մլրդ խորանարդ մետր գազ, երկրորդ փուլի ավարտից հետո՝ 55 մլրդ խորանարդ մետր գազ:

<sup>3</sup> Ինչ վերաբերում է Չինաստան առաքվելիք գազի գնին, ապա այդ մասին կոնկրետ պայմանավորվածություններ դեռևս ձեռք չեն բերվել: Միայն հայտնի է, որ 2005թ. վերջին Պեկին այցելած թուրքմենական կառավարական պատվիրակությունը խոսում էր հազար խորանարդ մետրի դիմաց \$80 գնի մասին:



Թուրքիայով, Բուլղարիայով, Ռումինիայով և Հունգարիայով Ավստրիային միացնող *Nabucco* (անդրկասպյան) գազատարը: Անգամ 2006թ. հունիսի 26-ին Բրյուսելում էներգետիկայի հարցերով եվրահանձնակատար Անդրիս Պիեբալգսի ու Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Ավստրիայի էներգետիկայի նախարարների միջև կնքվեց մի փաստաթուղթ, ըստ որի՝ Եվրամիությունը պետք է իր վրա վերցնի 3 300 կմ երկարությամբ *Nabucco* գազատարի կառուցման համար անհրաժեշտ \$5.8 մլրդ-ի հիմնական մասը<sup>1</sup>:

Հարկավոր է այդ հարթությունում դիտարկել 2006թ. նոյեմբերի սկզբին Գերմանիայի արտոգործնախարար Ֆրանկ-Վալտեր Շտեյնմայերի կենտրոնաասիական բոլոր հինգ երկրներ կատարած այցելությունը և մասնավորապես նոյեմբերի 2-ին Ազգաբաղում Թուրքմենստանի նախագահի հետ նրա մոտ երեք ժամանոց բանակցությունները: Հատկանշական է, որ հենց այդ հանդիպման ժամանակ է Թուրքմենբաշին հայտարարել «Հարավային Յուրտան» հանքավայրում 7 տրիլիոն խորանարդ մետր բնական գազի պաշարների հայտնաբերման մասին<sup>2</sup>:

Թեև 2006թ. մայիսի 6-ին Աստանայում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբանի հետ հանդիպման ժամանակ ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնին քննարկել էր նաև անդրկասպյան գազամուղին Ղազախստանի միանալու հարցը, սակայն մինչև վերջերս Վաշինգտոնը չէր բացառում նաև Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան գազամուղի կառուցման տարբերակը: Այդ առումով 2005թ. Ուզբեկստանից ամերիկյան ռազմակայանի դուրսբերման ֆոնին նույն տարվա օգոստոսին ԱՄՆ ձեռնարկած փորձը՝ ստանալ պաշտոնական Ազգաբաղի համաձայնությունը Թուրքմենստանում ռազմակայանի հիմնելու վերաբերյալ, կարող էր ունենալ նաև թուրքմենական գազի նկատմամբ փաստացի վերահսկողություն սահմանելու հեռակա նպատակ<sup>3</sup>:

### ***Ներքին զարգացումներ***

Թե որ երկրները կլինեն Ազգաբաղի ռազմավարական գործընկերները էներգետիկ համագործակցության ոլորտում, նախ և առաջ կախված է այն հարցի պատասխանից, թե ովքեր եկան փոխարինելու (կամ դեռևս կփոխարինեն) Թուրքմենբաշուն:

Ինչպես հայտնի է, Նիյագովի մահվան մասին պաշտոնական հայտարարության նույն օրն իսկ՝ 2006թ. դեկտեմբերի 21-ին, Թուրքմենստանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց այդ երկրի փոխվարչապետ<sup>4</sup>, առողջապահության նախարար Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը: Հինգ օր անց՝ դեկտեմբերի 26-ին, Թուրքմենստանի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Խալք մասլահաթին (ժողովրդական համաժողով)<sup>5</sup> Բերդիմուհամեդովին ու ևս հինգ հոգու հաստատեց որպես սույն թվականի փետրվարի 11-ին կայանալիք

<sup>1</sup> Արդեն իսկ խոսվում է այն մասին, որ *Nabucco* գազատարը պետք է գործի 2012թ.: Նախատեսվում է, որ այդ գազատարով Եվրամիությունը գազ է ստանալու Թուրքմենստանց, Ղազախստանից և Ուզբեկստանից և Ադրբեջանից: Չի բացառվում, որ նույն գազատարով դեպի Եվրոպա հոսի նաև ռուսական գազի որոշակի ծավալ: Բացի այդ, ըստ շրջանառվող ծրագրերի, նախատեսվում է *Nabucco*-ին միացնել նաև Իրաքից, Պարսից ծոցից և Իրանից կառուցվելիք գազատարները: Ըստ *BP Statistical Review of World Energy* գեկույցի՝ 2005թ. վերջի դրությամբ Ղազախստանի բնական գազի պաշարները կազմում էին 3 տրիլիոն խորանարդ մետր, Ուզբեկստանինը՝ 1.85 տրիլիոն, իսկ Ադրբեջանինը՝ 1.37 տրիլիոն խորանարդ մետր:

<sup>2</sup> Ի դեպ, ուշագրավ է, որ օտարերկրյա վերջին պատվիրակությունը, որը հանդիպել է Թուրքմենբաշուն, 2006թ. դեկտեմբերի 18-ին Ազգաբաղում գտնվող Կենտրոնական Ասիայում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիեր Մորելի գլխավորած առաքելությունն էր: Բանակցությունների ժամանակ քննարկվել էներգետիկ համագործակցության հարցը:

<sup>3</sup> Ավելի ուշ ամերիկյան աղբյուրները գրեցին, թե ռազմական տեղակայելու մասին առաջարկությունը, որն իր հետ բերել էր 2005թ. օգոստոսի 22-24-ը Ազգաբաղում գտնվող ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (*CENTCOM*) այն ժամանակվա ղեկավար, գեներալ Ջոն Աբիգեյդը, մերժվել էր անձամբ Նիյագովի կողմից:

<sup>4</sup> Թուրքմենստանի սահմանադրության համաձայն, երկրի նախագահը միաժամանակ կառավարության ղեկավարն է:

<sup>5</sup> Խալք մասլահաթից զատ Թուրքմենստանում գոյություն ունի նաև խորհրդարան: Նիյագովի ստեղծած իշխանական համակարգում, սակայն, հենց Խալք մասլահաթին է տրված օրենսդիր իրական իշխանությունը: Այդ մարմինը բաղկացած է 2 507 անդամից: Այնտեղ ընդգրկված են երկրի նախագահը, կառավարության անդամները, խորհրդարանի պատգամավորները, գերագույն դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, մարզերի ու շրջանների ղեկավարները, ինչպես նաև թուրքմենական ցեղախմբերի ավագանին: Նիյագովը միաժամանակ հանդիսանում էր Խալք մասլահաթի նախագահը, նրա տեղակալն էր երկրի խորհրդարանի խոսնակ Օվեգգելդի Աթաևը:

նախագահական ընտրությունների թեկնածուներ<sup>1</sup>՝ միաժամանակ օրինականացնելով նախկին փոխվարչապետի ընտրվելը որպես երկրի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար<sup>2</sup> ու նրա մասնակցությունը փետրվարի 11-ի ընտրություններին<sup>3</sup>:

Թեև արդեն իսկ պարզ է, որ իշխանափոխության ընթացքում թուրքմենական վերնախավին չի հաջողվել խույս տալ հակասություններից<sup>4</sup>, սակայն գլխավոր փոխհամաձայնությունը ձեռք է բերված. Թուրքմենստանի նոր նախագահն է Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը:

Ըստ որոշ տեղեկությունների՝ ներկայումս Թուրքմենստանի իշխանական համակարգում փոխդասավորվածությունը մոտավորապես հետևյալն է.

- Գուրբանգուլի Բերդիմուհամեդովին անվերապահորեն պաշտպանում են Թուրքմենստանի նախագահի անվտանգության ծառայության պետ Ակմուրադ Ռեջեպովը և ազգային անվտանգության նախարար Գելդիմուհամեդ Աշիրմուհամեդովը (մի վարկածի համաձայն, Բերդիմուհամեդովը համարվում է անգամ «Ռեջեպովի մարդը»<sup>5</sup>),
- մյուս խմբի մեջ են մտնում տարբեր աստիճանի ազդեցությամբ աչքի ընկնող պաշտպանության նախարար Աղազելդի Մամեդգելդիևը, ներքին գործերի նախարար Ակմամեդ Ռախմանովը, սահմանապահ զորքերի հրամանատար Բայրամ Ալունովը և արտգործնախարար Ռաշիդ Մերեդովը, ովքեր թեև սատարում են Բերդիմուհամեդովին, սակայն դուրս են գտնվում Ռեջեպով-Աշիրմուհամեդով զույգի խմբավորումից:

### **Հետևություններ և հեռանկար**

Ակնհայտ է, որ Թուրքմենստանում տեղի ունեցած իշխանափոխությունը ծրագրված չէր Նիյազովի կենդանության օրոք: Այդ մասին են վկայում թե՛ երկրի խորհրդարանի այլևս նախկին խոսնակի ձերբակալությունը և թե՛ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի գործողությունների միայն հետփաստյա (*post factum*) օրինականցումը: Այսինքն՝ իշխանափոխության նախօրոք անկա ծրագրի պարագայում չէր ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ ստիպված ձերբակալում են ըստ սահմանադրության Թուրքմենստանի երկրորդ մարդուն, կամ երկրի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման և նոր նախագահի ընտրության կարգի հարցում խախտում գործող սահմանադրությունը: Նմանատիպ վարչակարգերում նախօրոք հաշվարկված իշխանափոխության ժամանակ պահպանում են օրինականության սեփական ֆոնը, որպեսզի, կապված լեգիտիմության հետ, «ժառանգորդի» (այսինքն՝ ողջ վարչակարգի)

<sup>1</sup> 2007թ. փետրվարի 11-ին Թուրքմենստանում կայանալիք նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների մասին տեղեկությունը տե՛ս Հավելված № 1-ում:

<sup>2</sup> Նիյազովի կենդանության օրոք գործող սահմանադրական նորմի համաձայն, երկրի նախագահի մահվան պարագայում Թուրքմենստանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար էր դառնում խորհրդարանի ղեկավարը, որը, սակայն, իրավունք չուներ մասնակցել նախագահական ընտրություններին: Թուրքմենստանի խորհրդարանի ղեկավարը օրն իսկ՝ դեկտեմբերի 22-ին, քրեական մեղադրանքով ձերբակալվեց Թուրքմենստանի խորհրդարանի խոսնակ Օվեգգելդի Աթաևը: Խոսնակի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց նախկին փոխխոսնակ Ակջա Նուրբերդիևան:

<sup>3</sup> Դեկտեմբերի 26-ի նիստի ժամանակ Խալբ մասլահաթին՝ 2007թ. փետրվարի 11-ը սահմանելով որպես նախագահական ընտրությունների օր, մի շարք փոփոխություններ կատարեց Նիյազովի օրոք ընդունված Թուրքմենստանի սահմանադրությունում: Ըստ այդ փոփոխությունների՝ երկրի նախագահի մահվան դեպքում որպես երկրի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նրան պետք է փոխարինի ոչ թե խորհրդարանի խոսնակը, այլ փոխվարչապետը (նույն նիստի ժամանակ, արդեն ըստ օրենքի, պաշտոնակատար արվեց Օվեգգելդի Աթաևը): Հանվեց այն արգելքը, ըստ որի՝ երկրի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը չի կարող մասնակցել նախագահական ընտրություններին: Նշանակվեց նաև Խալբ մասլահաթի նոր նախագահի ընտրության օրը՝ փետրվարի 14, ինչպես նաև 55 տարեկանից մինչև 40 իջեցվեց Խալբ մասլահաթի նախագահ ընտրվելու համար անհրաժեշտ նվազագույն տարիքային ցենզը:

<sup>4</sup> Այդ մասին է վկայում այն փաստը, որ մինչև դեկտեմբերի 26-ի Խալբ մասլահաթի նիստը այդպես էլ չհաջողվեց փոխհամաձայնության գալ Խալբ մասլահաթի նախագահի և ազդեցիկ Անվտանգության պետական խորհրդի քարտուղարի (խորհրդի նախագահը հանդիսանում է Թուրքմենստանի նախագահը) թեկնածուների շուրջ: Վերջինիս առնչությամբ նշվում են երկու հիմնական թեկնածուների անուններ՝ ներկայիս քարտուղար, պաշտպանության նախարար Աղազելդի Մամեդգելդիև և Թուրքմենստանի նախագահի անվտանգության ծառայության պետ Ակմուրադ Ռեջեպով:

<sup>5</sup> Արտերկրում գտնվող թուրքմենական ընդդիմադիրները հատկապես առանձնացնում են գեներալ Ակմուրադ Ռեջեպովի ազդեցությունը Թուրքմենստանի ներքինական զարգացումներում: Մասնավորապես, նշվում է, որ այսօր Թուրքմենստանի ազգային անվտանգության ու ներքին գործերի նախարարություններում ազդեցիկ դիրքեր զբաղեցնող մարդկանց մեծ մասը դուրս է եկել Ռեջեպովի գլխավորած ծառայությունից:

համար լրացուցիչ խնդիրներ չստեղծեն միջազգային հանրությունում (ինչպես, օրինակ, Ադրբեյջանի դեպքում էր)<sup>1</sup>:

Հետևաբար, Թուրքմենստանի պարագայում գործ ունենք կա՛մ ֆորսմաժորային ինչ-որ իրավիճակի (երբ նախագահի մահն, իրոք, անակնկալ էր և այդ պահին իրական իշխանություն ունեցող շրջանակները ստիպված էին գործել), կա՛մ հեղաշրջման հետ: Սակայն երկու դեպքում էլ այդ շրջանակների համար էական է արտաքին ուժի կենտրոնների դիրքորոշումները: Այսինքն՝ արտերկրի հետ Թուրքմենստանի նոր իշխանությունների էներգետիկ համագործակցության հետագա ռազմավարությունը մի մեծ մասով կախված է այն հանգամանքից, թե տվյալ ուժի կենտրոնն ինչ դիրքորոշում է որդեգրել թուրքմենական իշխանափոխության նկատմամբ կամ մյուս սցենարի համաձայն՝ մինչև այդ իշխանափոխությունը: Գալիք ամիսներին պետք է որ պարզ լինի, թե որ ուղղությամբ կհոսի թուրքմենական գազը:

Մյուս կողմից՝ քիչ հավանական է, որ թուրքմենական նոր ղեկավարությունը առաջիկայում իր արտաքին քաղաքականության մեջ իրականացնի կտրուկ շրջադարձեր, քանի որ առկա է երկրի ներսում սեփական դիրքերն ամրապնդելու խնդիրը:

Թուրքմենստանի ու ընդհանուր առմամբ կենտրոնաասիական էներգակիրների նկատմամբ վերահսկողություն սահմանելը Ռուսաստանի համար ունի էական նշանակություն: Առանց կենտրոնաասիական (առաջին հերթին՝ թուրքմենական) գազի, Մոսկվան լուրջ դժվարություններ կունենա ոչ միայն իր արտաքին քաղաքականության մեջ (քանի որ էներգետիկ քաղաքականությունը Ռուսաստանի արտաքին ռազմավարության հիմնասյուներից մեկն է), այլև սեփական տնտեսական զարգացման գործում (քանի որ արտերկրին վաճառվող էներգակիրներից է ձևավորվում Ռուսաստանի պետական բյուջեի մեծ մասը): Թուրքմենական գազը անհրաժեշտ է Ռուսաստանին, որպեսզի այն կարողանա փակել ներքին սպառման ու արտաքին պարտավորությունների համար արդեն իսկ իր մոտ չհերիքող բնական գազի պակասորդը: Ուստի, Մոսկվան ձգտելու է պահպանել սեփական ազդեցությունը Աշգաբադում:

Ռուս-ղազախական բանակցությունները՝ ղազախական բնական գազի հազար խորանարդ մետրի դիմաց մինչև \$140 վճարելու (ներկայիս գինը \$65 է) մասին և ռուս-թուրքական նախագիծը՝ Սև ծովի հատակով «Կապույտ հոսք» գազատարի երկրորդ գծի անցկացման վերաբերյալ, ռուսական վերոհիշյալ ռազմավարության մասն են և նպատակ ունեն կանխել Ռուսաստանը շրջանցող Կենտրոնական Ասիա-Եվրոպա գազատարի կառուցումը:

Մյուս կողմից՝ թուրքմենական գազը ճնշամիջոց է Մոսկվայի նկատմամբ: Ակնհայտ է դառնում, որ Ռուսաստանի հետ հարաբերություններում ԱՄՆ-ն ու ԵՄ-ը փորձում են առավելագույնս օգտագործել այդ հանգամանքը: Կենտրոնաասիական էներգակիրների նկատմամբ ամերիկյան, եվրոպական վերահսկողության հաստատումը կրեթի միջազգային քաղաքական ու տնտեսական համակարգում Ռուսաստանի դիրքերի թուլացման, ինչպես նաև կամրապնդի առաջին հերթին Եվրոպայի էներգետիկ անվտանգությունն ու նրա կապվածությունը ԱՄՆ-ի հետ: Այդ իմաստով պատահական չէ, որ նավթի միջազգային գների անկմանն ուղղված Արևմուտքի ջանքերի ֆոնին՝ ՆԱՏՕ-ի վերջին՝ Ռիգայի գազաթաժողովում (2006թ. նոյեմբերի 28-29) կարևորվեց այլանսի նոր՝ Արևմուտքի էներգետիկ անվտանգությունն ապահովող առաքելության մշակման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով գալիք տարիներին միջազգային քաղաքականության մեջ էներգետիկ անվտանգության հիմնախնդրի նշանակության աճն ու էներգետիկ պաշարների համար սրվող պայքարը՝ ակնհայտ է դառնում, որ նավթով ու բնական գազով հարուստ Կենտրոնական Ասիան աստիճանաբար մուտք է գործում անկայունության ժամանակաշրջան: Դրդական «գունավոր հեղափոխությունը», ուզբեկական Անդիջան քաղաքի դեպքերը և Թուրքմենս-

<sup>1</sup> Ներկայացվածի համատեքստում կարող են լիովին այլ իմաստ ստանալ 2006թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թուրքմենբաշու իրականացրած կարգային փոփոխությունները, որոնք, ի դեպ, համընկան վերջինիս առողջական վիճակի վատացման հետ: Նշված ժամանակահատվածում փոխվեցին Թուրքմենստանի բոլոր հինգ նահանգների (Ախալ, Բալկան, Դաշոզուգ, Լեբափ և Մարի) ղեկավարները, սահմանապահ գործերի հրամանատարը, ներքին գործերի նախարարի առաջին տեղակալը, Ախալ ու Մարի նահանգների ոստիկանապետները, ինչպես նաև գյուղատնտեսության նախարարը:

տանում տեղի ունեցած անսպասելի (կամ Թուրքմենբաշու օրոք չծրագրված) իշխանափոխությունը այդ գործընթացի բաղկացուցիչներն են: Առաջիկա տարիներին Ղազախստանի, Ուզբեկստանի ու Տաջիկստանի միանձնյա իշխանություն ունեցող նախագահների կյանքից հեռանալը «հնարավորությունների պատուհան» է բացելու այդ երկրներում գոյություն ունեցող իրավիճակի փոփոխման համար: Նշված հանգամանքը նույնպես նպաստելու է տարածաշրջանային անկայունության աճին:

Թեև Թուրքմենստանը՝ որպես գազ արտահանող երկիր, կարևորություն է ներկայացնում Հայաստանի համար, սակայն մեր երկրի պարագայում առաջին հերթին նշանակություն ունի թուրքմենական նոր իշխանությունների դիրքորոշումը Ադրբեջանի նկատմամբ: Կասպից ծովում առկա «Ազերի», «Չրադ» ու «Մարդար» (ադրբեջանական տարբերակով՝ «Քյափազ») նավթահանքերի պատկանելության առնչությամբ Ազգաբաղն ու Բաքուն հակասություններ ունեն: Հատկապես վերջին հանքավայրի կապակցությամբ հակասությունները բավականին սուր են: Անցած տարիներին գրանցվել են դեպքեր, երբ թուրքմենական ռազմական ինքնաթիռները հատուկ թռիչքներ են իրականացրել վիճելի տարածքներում նավթի հետախուզմամբ զբաղված ադրբեջանական նավերի վրայով, իսկ թուրքմենական ռազմանավակները սկսել են նավարկել վիճելի հանքավայրերի մոտ:

Պետք է ենթադրել, որ անդրկասպյան գազամուղին Թուրքմենստանի միանալու պարագայում այդ հակասությունները, թերևս, թուլանան, ինչը կարող է իր անդրադարձը գտնել Ադրբեջանի ռազմական բյուջեում:

*Մարգիս Հարությունյան  
«Նորավանք» հիմնադրամ*

2006թ. դեկտեմբերի 26-ի նիստի ժամանակ Ժողովրդական համաժողովը (Խալք մասլահաթին) հաստատեց սույն թվականի փետրվարի 11-ին կայանալիք նախագահական ընտրությունների թեկնածուներին: Նրանք են՝

1. Աթաջիկով Ամանյազ, ծնվել է 1947թ., ներկայումս Դաշողուզ նահանգի նահանգապետի առաջին տեղակալն է,
2. Բերդիմուհամեդով Գուրբանգուլի, ծնվել է 1957թ., ներկայումս Թուրքմենստան նախագահի ժամանակավոր պաշտոնակատարն է,
3. Գուրբանով Մուհամեդնազար, ծնվել է 1957թ., ներկայումս Թուրքմենստանի նավթարդյունաբերության և հանքային պաշարների նախարարի տեղակալն է,
4. Ղարաջան Օրազմուրադ, ներկայումս Աբադան քաղաքի քաղաքագլուխն է,
5. Նուրիև Իշանկուլի, ներկայումս Ղարաբեկատու շրջանի (Լեբափի նահանգ) ղեկավարն է,
6. Պոմանով Աշիրնիյազ, ծնվել է 1962թ., ներկայումս Թուրքմենբաշի (նախկին՝ Կրասնովոդսկ) քաղաքի քաղաքագլուխն է:

### ***Բերդիմուհամեդով Գուրբանգուլի Սյալիքգուլին***

Ծնվել է 1957թ. Թուրքմենստանի Ախալի նահանգի Գեկլթեփի շրջանի Բաբարաբ գյուղում: 1979թ. ավարտել է Թուրքմենական պետական բժշկական ինստիտուտը: Բժշկական գիտությունների թեկնածու է:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1979-ից: Այդ տարվանից մինչև 1997թ. Թուրքմենստանի Առողջապահության ու բժշկական արդյունաբերության նախարարության համակարգում զբաղեցրել է տարաբնույթ պաշտոններ՝ դասախոս, Թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբիոնի դոցենտ, Թուրքմենական պետական բժշկական ինստիտուտ Ստոմատոլոգիական ֆակուլտետի ղեկան, Թուրքմենստանի Առողջապահության ու բժշկական արդյունաբերության նախարարության Ստոմատոլոգիական կենտրոնի տնօրեն:

1997թ. նշանակվել է Թուրքմենստանի Առողջապահության ու բժշկական արդյունաբերության նախարար, Թուրքմենստանի առողջապահության զարգացման պետական հիմնադրամի գործադիր տնօրեն, Թուրքմենական պետական բժշկական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար:

2001թ. ապրիլի 3-ին Թուրքմենստանի նախագահի հրամանով նշանակվել է կառավարության ղեկավարի տեղակալ՝ փոխվարչապետ:

2006թ. դեկտեմբերի 21-ից հանդիսանում է Թուրքմենստանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, Թուրքմենստանի զինված ուժերի գլխավոր զերագույն հրամանատար:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը Թուրքմենբաշու անձնական բժիշկն էր և նրա արտամուսնական զավակը:

## ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԲԵԼԱՌՈՒՍ. ՆԱՎԹԱԳԱԶԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ռուսական ընկերությունների՝ Բելառուսի մատակարարվող գազի գները վերանայելու մասին որոշումը հանգեցրեց Ռուսաստան-Բելառուս հարաբերությունների ամենանշանակալի ճգնաժամին:

Բելառուսի նկատմամբ նման քաղաքականության իրագործումը հիմնականում Մինսկի հետ միասնական պետության կառուցման քաղաքականության տապալման հետևանք է: Մաքավական կարևոր է, քանի որ հենց այս հիմնախնդիրն է տարբերում Բելառուսի նկատմամբ Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նպատակներն այն նպատակներից, որոնք տեղ էին գտել Ուկրաինայի, Մոլդովայի, Ադրբեջանի, Վրաստանի և մասամբ Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերություններում: Փաստորեն, Ռուսաստանի «էներգետիկ դիվանագիտության» թիրախ դարձավ մի պետություն, որը բազմաթիվ թելերով կապված է Ռուսաստանի հետ, նրա ռազմավարական դաշնակիցն է և արտաքին քաղաքական դաշտում ունի ակնհայտ ռուսամետ դիրքորոշում:

Բելառուսն առաջին պետությունն էր, ում նկատմամբ կիրառվող «էներգետիկ դիվանագիտությունը» բացարձակապես կախված չէր ռուսական գազ գնող պետության արտաքին քաղաքականությունից, ինչը նկատվել էր ՌԴ-Ուկրաինա, ՌԴ-Վրաստան, ՌԴ-Հայաստան (Հայաստանի պարագայում ՌԴ-ի հետ ռազմավարական դաշինքը համեմատաբար ցածր մակարդակի վրա պահեց գազի գները) հարաբերություններում: Ռուս-բելառուսական էներգետիկ ճգնաժամը նոր երևույթ է ռուսական՝ բելառուսական ուղղությամբ արտաքին քաղաքականության մեջ, որը կարելի է մեկնաբանել Ռուսաստանի՝ որպես համաշխարհային քաղաքականություն «գերտերության» վերադարձի գործընթացի տերմիններով: Ռուսաստան-«գերտերության» նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում վարվող քաղաքականության հիմնական բաղադրատարրերը պայմանականորեն հանդիսանում են.

- անհնազանդներին և «օտարամոլներին» պատժելը (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան),
- ռազմավարական դաշնակիցների հիմնական տարածաշրջանային կամ գլոբալ նշանակության ձեռնարկությունների, հիմնականում՝ էներգետիկ, նկատմամբ բացարձակ վերահսկողություն հաստատելը (էներգետիկ ակտիվներ Բելառուսում և Հայաստանում, ուրանի հանքեր Ղրղզստանում, գազի պաշարներ Ուզբեկստանում):

Դժվար է ասել, թե ինչի կհանգեցնի «անհնազանդների» նկատմամբ վարվող քաղաքականությունը, սակայն երկրորդ խմբի պետությունների նկատմամբ իրագործվող քաղաքական գիծն առաջին հերթին պետք է որ հանգեցնի դրանց անվիճելի տնտեսաքաղաքական կախվածությանը Ռուսաստանից: Մակայն նման եզրակացությունն անվիճելի համարվել չի կարող, և այս դեպքում բավական կարևոր է հենց Բելառուսի օրինակը:

### ***Բելառուս. ՌԴ «դաշնակցի» և «գոհի» մոդելը***

Միայն տեղեկատվական դաշտում տեղ գտած վերլուծություններն ու գնահատականները բավական են՝ հասկանալու համար, որ Բելառուսն ավելի քան շոայլորեն է օգտվում ՌԴ-ից ներկրվող էներգետիկներից և դրանց ցածր գներից: Ռուսական նավթի վերամշակման արդյունքում Բելառուսը տարեկան ստանում է ավելի քան \$1 մլրդ-ի շահույթ, իսկ ցածր գներով գնվող ռուսական գազը անցած տարվա ռուս-ուկրաինական «գազային պատերազմի» ժամանակ Մինսկը մասամբ ուղղում էր դեպի Ուկրաինա՝ փաստորեն հակասելով իր ռազմավարական դաշնակցի շահերին:

Ակնհայտ է, որ ընդհանուր պետության կառուցման հայեցակարգը վերջին տասնամյակի ընթացքում բելառուսական կողմը հաջողությամբ օգտագործել է ՌԴ-ից համապատասխան տնտեսական արտոնություններ ստանալու համար: Բելառուսի ինքնիշխանության սահմանափակման հաշվին Ռուսաստանն ու Բելառուսը վերամիավորելու Ա.Լուկաշենկոյի պատրաստակամությունից գրեթե ոչինչ այսօր չի մնացել: Այս պատրաստակամության թուլացումն ակնհայտ էր արդեն յոթ տարի առաջ, երբ Էլցինյան քառասյին իշխանությունը փոխարինվեց պուտինյան խարիզմատիկ և ուժեղ վարչակազմով՝ դրանով իսկ զրոյացնելով Ա.Լուկաշենկոյի միավորված Ռուսաստանի և Բելառուսի նախագահ դառնալու շանսերը: Հենց այդ պահից ռուս-բելառուսական դաշինքը առաջին ճեղքվածքը տվեց՝ դառնալով հոչակագրերի և Ռուսաստանից տնտեսական հատուկ պայմանների կորզման բարոյահոգեբանական հիմք:

Պաշտոնական Վաշինգտոնն արդեն հայտարարել է, որ չի ցանկանում Իրաքի շուրջ երկխոսության մեջ ներառել Իրանը և Սիրիան՝ Իրանի պարագայում մատնանշելով վերջինիս միջուկային ծրագիրը, իսկ Սիրիայի պարագայում՝ Լիբանանին առնչվող հանգամանքները:

Ընդհանուր առմամբ, Սպիտակ տան՝ Իրաքում իրավիճակը կայունացնելուն ուղղված քայլերն արդյունավետ չեն: ԱՄՆ իրաքյան քաղաքականությանը վերաբերող դիսկուրսում հնչում են տեսակետներ այն մասին, որ ամերիկյան վարչակազմն ավելի շատ փորձում է տակտիկական, քան հայեցակարգային փոփոխություններ կատարել: Ասվածի ապացույցն է 2005թ. դեկտեմբերի 30-ին Իրաքի նախկին առաջնորդ Ս.Հուսեյնի մահապատիժը, որը հոկտեմբերին իրաքյան դատարանի կողմից մեղավոր էր ճանաչվել՝ 1982-ին Ալ-Դուջեյլ գյուղում 148 շիաների սպանության համար: Ս.Հուսեյնի մահապատիժը մեծ աղմուկ առաջացրեց Իրաքում և միջազգային տարբեր շրջանակներում՝ երբեմն հակոտնյա գնահատականների տեղիք տալով: Սաուդյան Արաբիան, ինչպես նաև իսլամական այլ երկրներ ու գործիչներ տարակուսանք են արտահայտել մահապատիժն իսլամական ամենամեծ և սրբազան տոներից մեկի՝ Իդ Ալ-Ադհայի (կամ Կուրբան-բայրամի) ընթացքում իրականացնելու համար, ինչն անթույլատրելի է իսլամի տեսանկյունից: Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, նաև Եվրամիության մի շարք երկրներ, ՄԱԿ-ը, ՌԴ-ն Ս.Հուսեյնի մահապատիժը համարել են մեծագույն սխալ և դատապարտել այն: Ս.Հուսեյնի մահապատիժը գոհունակությամբ են ընդունել Իրանը, Իրաքի քրդերն ու շիաները:

Ամերիկյան վարչակազմի և իրաքյան իշխանությունների այն հավաստիացումները, թե Ս.Հուսեյնի մահապատիժը կնպաստի Իրաքի միասնությանը և վերջ կդնի Իրաքի պատմության մութ ժամանակներին, անհիմն են, և դա ապացուցվեց մահապատիժն հաջորդած ու սուննիների իրականացրած ահաբեկչությունների շղթայով: Առաջին պայթյունն արձանագրվեց դեկտեմբերի 30-ի հենց առավոտյան, շիաների սրբատեղի համարվող Քուֆա քաղաքի շուկաներից մեկում:

Իրաքյան հետագա գործընթացների տեսանկյունից ուշագրավ է 2007-ի հունվարի 10-ին նախագահ Ջ.Բուշի ծրագրային ելույթը Իրաքում ԱՄՆ վարչակազմի նոր ռազմավարության մասին, որը, վերջինիս խոսքերով՝ ոչ միայն նպատակ ունի կայունացնել իրավիճակը տարածաշրջանում, այլև դառնալ կարևոր հանգրվան միջազգային ահաբեկչության դեմ պայքարում:

Ծրագրի ամենակարևոր կողմերից մեկն իրաքյան քաղաքականության մեջ ամերիկյան կողմի սխալների ու բացթողումների մասին Բուշի դիտարկումն էր և հիմնական մեղքի բաժինն իր վրա վերցնելը: Բուշն այդ երկրում իրավիճակի կայունացմանը խոչընդոտող երկու պատճառ առանձնացրեց՝ զինվորականության պակասը և ամերիկյան հրամանատարության՝ գործելու ոչ բավարար ազատությունը: Այդ պատճառով Իրաքում ամերիկյան համակազմն ավելանալու է ավելի քան 20 հազար զինվորականներով: Բացի այդ, լրացուցիչ միջոցներ պետք է ներդրվեն՝ կասեցնելու գրոհայինների մուտքը հարևան երկրներից:

2007-ին երկրի անվտանգության հիմնական երաշխավոր պետք է լինի իրաքյան կառավարությունը, իսկ Բաղդադի ինը շրջանները պետք է անցնեն իրաքյան 18 բանակային և ոստիկանական բրիգադների հսկողությանը:

Միաժամանակ, ԱՄՆ նախագահը հասկանալ տվեց, որ Նուրի Ալ-Մալիքիի կառավարությունը չպետք է փորձարկի իրենց համբերությունը, և եթե չկարողանա կատարել իր վրա դրված պարտականությունները, մասնավորապես՝ ապառազականացնել սուսնի և շիա ռազմական խմբավորումները, ապա կգրկվի ինչպես ԱՄՆ, այնպես էլ իրաքյան ժողովրդի աջակցությունից: Ամերիկյան հայտնի քաղաքագետ, ԱՄՆ նախկին պետքարտուղար Հ.Քի-սինջերի կարծիքով՝ Իրաքի կառավարությունը երբեք չի կարող կասեցնել քաղաքացիական պատերազմն ու միջդավանական բախումները, իսկ դա նշանակում է, որ այդ երկրում հետագա զարգացումները կայունության չեն հանգեցնելու:

Բուշի կարծիքով՝ ներկա փուլում Իրաքից հեռանալը հղի է այդ երկրի համար կործանարար հետևանքներով, ինչը հաստատում է նաև փորձագիտական հանրությունը: Բուշը չի թաքցնում, որ նոր ռազմավարության խստագույն իրականացման դեպքում անգամ անհնար է հասնել շուտափույթ և դյուրին հաղթանակի: 2006-ի դեկտեմբերի վերջին Պենտագոնի նոր ղեկավար Ռոբերտ Գեյթսը Սենատի պաշտպանության հանձնաժողովի լսումների ժամանակ նույնիսկ հայտարարեց. «Մենք չենք հաղթում, բայց և չենք պարտվում»: Այս ձևակերպումը հակասում է 2006թ. նոյեմբերին Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների նախօրեին Իրաքի մասին Բուշի հաշվետվության մեջ տեղ գտած «Մենք, անկասկած, կհաղթենք» ձևակերպմանը: «*The Washington Post*»-ին տված հարցազրույցում Ջ.Բուշն ընդգծում է, որ պառլամենտական ընտրություններում հանրապետականների պարտությունը գնահատում է ոչ թե Իրաքում ամերիկյան ներկայությունն ընդհատելու, այլ՝ որպես ճգնաժամից նոր ուղիներ գտնելու անհրաժեշտություն:

Հունվարյան ելույթում Ջ.Բուշն իր երկրի քաղաքացիներին տեղեկացրեց, որ իրենց սպասվում է ծանր տարի, որը կհանգեցնի նորանոր զոհերի ինչպես իրաքյան բնակչության, այնպես էլ ամերիկացի զինծառայողների շրջանում:

Բացի ռազմական ծրագրից, Բուշն առաջ քաշեց նաև տնտեսական ծրագրեր. ԱՄՆ-ը պատրաստվում է շուրջ \$10 մլրդ ներդնել՝ Իրաքում ենթակառուցվածքների վերականգնման և նոր աշխատատեղերի ստեղծման համար:

Ամերիկյան հայտնի քաղաքագետ Ջ.Բժեզինսկին խիստ քննադատաբար է մոտենում Բուշի ծրագրին: Ըստ նրա, ընդունելով ԱՄՆ պարտությունն Իրաքում՝ Բուշը փորձում է օգտագործել պատասխանատվությունից խուսափելու ստանդարտ ձև՝ պարտությունը համարելով իր սխալը: Քաղաքական հնարք է Իրաք լրացուցիչ զորք ուղարկելը: Ռազմական հաղթանակի հասնել՝ չի նշանակում հաղթել պատերազմը: Ամերիկյան զինվորների մասնակցությունը փողոցային արյունոտ մարտերին և դրանց ելքը չեն կարող ազդել շարունակական քառսի, էթնիկ և միջդավանական բռնության, ինչպես նաև գրոհայինների նպատակամղված հակամերիկյան գործողությունների դադարեցման վրա:

Իսկ Իրաքում ռազմաքաղաքական իրավիճակը և անվտանգության ոլորտը շարունակում են մնալ բարդ: Նուրի Ալ-Մալիքիի կառավարությունը, չնայած բազմաթիվ խոստումներ-

րին, չի կարողանում արդյունավետ գործել: Սուննի-շիա հակամարտության մեջ աստիճանաբար ավելի մեծ թվով պետություններ են ներքաշվում: Իրաքյան պաշտոնական տվյալներով՝ Սաուդյան Արաբիայի առանձին շրջանակներ հսկայական միջոցներ են տրամադրում սուննի գրոհայիններին, ինչը, բնականաբար, անհանգստացնում է Թեհրանին: Իր հերթին, սաուդյան հատուկ ծառայությունները մեղադրում են Իրանին՝ շիական ռազմաքաղաքական խմբավորումներին աջակցելու, իրաքյան տարածքում շիական պետություն ստեղծելու մեջ: Պաշտոնական Ռեհան արդեն հայտարարել է, որ եթե ԱՄՆ-ը ներկա փուլում հեռանա Իրաքից, ապա իրենք ստիպված կլինեն միջամտել իրաքյան խնդրին, օգնել և զինել սուննիներին, որպեսզի նրանք կարողանան դիմագրավել շիական սպառնալիքը:

Իրաքյան ներկայիս իրողությանը բնորոշ են ռազմական խմբավորումների գործունեությունը, ինչը հիշեցնում է լիբանանյան քաղաքացիական պատերազմի ժամանակ միմյանց հետ հակամարտող ռազմաքաղաքական կառույցների գործելակերպը: Իրաքում ներկա փուլի մյուս առանձնահատկություններից մեկը կապված է շիական և սուննիական «մահվան էսկադրոնների» գործողությունների հետ, որոնք ներգրավված են մարդկանց սպանության մեջ՝ ըստ կրոնական հատկանիշի: Բազմաթիվ տվյալներ կան այն մասին, որ շիական էսկադրոնները շատ դեպքերում օգտվում են պետական ուժային կառույցների աջակցությունից: Աստիճանաբար ակնհայտ է դառնում Բաղդադի բաժանումը երկու՝ արևելյան (մեծ մասամբ՝ շիական) և արևմտյան (հիմնականում՝ սուննիական) մասերի: Այն ևս հիշեցնում է կրոնական հիմքի վրա Բեյրութի բաժանումը քաղաքացիական պատերազմի շրջանում: Արևմտյան լրատվամիջոցների հաղորդմամբ՝ շիաները ձգտում են աստիճանաբար դուրս մղել սուննիներին Բաղդադից: Միջոցավանական թշնամությունից և ջարդերից խուսափելու համար շատերը հեռացել են իրենց մշտական բնակության վայրերից դեպի անվտանգ շրջաններ: 2003-ից ի վեր մոտ 2 միլիոն մարդ է արտագաղթել երկրից:

Իրաքյան պառլամենտի խոսնակ, սուննիադավան Մահմուդ Ալ-Մաշհադանիի կարծիքով՝ իրաքյան հասարակության երկփեղկվածությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ իրաքյան քաղաքական և կրոնական ուժերը չեն հրաժարվել ծայրահեղությունից և իրենց նեղ քաղաքական հետաքրքրություններից: Թե երբ և ինչպես դա պետք է տեղի ունենա, պարզ չէ, հատկապես որ արտաքին դերակատարները դրանում, կարծես, շահագրգիռ չեն:

Այսպիսով, 2007թ. մերձավորարևելյան տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, կշարունակվի լարվածությունը. մասնավորապես՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ, Պաղեստինում Ֆայթ և Համաս խմբավորումների միջև, Պաղեստինի և Իսրայելի միջև, Լիբանանի ներքաղաքական կյանքում, Աֆղանստանում և, ի վերջո Իրաքում, որտեղ առկա իրավիճակի հետագա շարունակումը, ինչպես նշել է Ռոբերտ Գեյթսը, կարող է հանգեցնել «տարածաշրջանային պայթյունի»:

*Արաքս Փաշայան*  
*«Նորավանք» ԳԿՀ*

## ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2006թ. նոյեմբերի 21-ին՝ Լիբանանում անկախության օրվա նախօրեին, սպանվեց հակասիրիական կողմնորոշման ևս մեկ քաղաքական գործիչ՝ արդյունաբերության նախարար Պիեր Ժմայելը<sup>1</sup>: Պատահական չէ, որ վերջինիս սպանությունը կանխորոշեց երկրում հակադիր ճամբարների և նրանց տարածաշրջանային ու միջազգային հովանավորների միջև հակասությունների սրումը: Փորձենք ուրվագծել 2006թ. վերջին Լիբանանում և նրա շուրջ տեղի ունեցած զարգացումները, ինչպես նաև դրանց պատճառներն ու հնարավոր հետևանքները:

Պիեր Ժմայելի հուղարկավորությունը (նոյեմբերի 23) վերաճեց սգո ցույցի, որին մասնակցեցին Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի որդու՝ Սաադ Հարիրիի գլխավորած հակասիրիական դաշինքում համախմբված «Մարտի 14-ի» ուժերը<sup>2</sup>: Նրանք Ժմայելի սպանության մեջ մեղադրեցին Դամասկոսին:

Սպանության հետևանքով երկրում ստեղծված լարվածությունն էլ ավելի ուժեղացավ, քանի որ հենց այդ օրերին լիբանանյան կառավարությունը՝ Ֆուադ Սինիորայի գլխավորությամբ, քննարկեց և հավանության արժանացրեց նոյեմբերի 21-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդում ընդունված որոշումը: Այն նախատեսում էր Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորում<sup>3</sup>: Թեև լիբանանյան կառավարությունն արդեն իսկ հավանություն էր տվել միջազգային դատարան ստեղծելու որոշմանը, սակայն նախագահ Էմիլ Լահուդը, որն իր աջակցությունը հայտնեց ընդդիմադիր ճակատում համախմբված շիական *Հիզբալլահ* և *Անալ*, ինչպես նաև նրանց հետ սերտորեն համագործակցող մարոնի գեներալ Միշել Աունի<sup>4</sup> ղեկավարած *Ազատ հայրենասիրական* շարժումներին, հայտարարեց, որ կառավարության որոշումը ոչ սահմանադրական է, քանի որ ընդունվել է այն բանից հետո, երբ հրաժարական էին տվել 6 նախարարներ<sup>5</sup>: Նախագահն ու ընդդիմադիր ճակատի ղեկավարները պահանջեցին գործող կառավարության հրաժարականն ու ազգային միասնության կառավարության ձևավորումը:

2006թ. դեկտեմբերին Լիբանանում կատարված հարցումների համաձայն՝ շիաների 95, իսկ լիբանանյան քրիստոնյաների 50%-ը կողմնակից էր Ֆուադ Սինիորայի կառավարության հրաժարականի պահանջին: Մինչդեռ սուննիների 87%-ը, քրիստոնյաների 50%-ը և դրուզները

<sup>1</sup> Լիբանանի կառավարման հիմքում դրված կրոնադավանական համակարգի համատեքստում դեռևս զգալի դեր են խաղում կրոնատոհմային ընտանիքները: Նրանց շարքում ազդեցիկ դիրքեր ունի քրիստոնյա մարոնի Ժմայելների ընտանիքը: Պիեր Ժմայել ավագը (սպանվածի պապը) «Լիբանանյան փաղանգներ» («Քաթաբա») կուսակցության հիմնադիրն էր, իսկ հորեղբայրն ու հայրը եղել են երկրի նախագահներ: 1975թ. Պիեր Ժմայել ավագի դեմ իրականացված հարձակմանը հետևած իրադարձությունները սկիզբ դրեցին Լիբանանում երկարատև քաղաքացիական պատերազմին, իսկ 1982թ. սեպտեմբերի 14-ին նորընտիր նախագահ Բաշիր ժմայելի (սպանվածի հորեղբայրը) սպանությանը հետևեց խրախուսիչների կողմից արևմտյան Բեյրութի գրավումն ու պաղեստինյան փախստականների Սաբրա և Շաթիլա ճամբարներում հազարավոր պաղեստինցիների սպանությունը:

<sup>2</sup> Հակասիրիական դաշինքում համագործակցում են Սաադ Հարիրիի գլխավորած «Ապագա» (արաբերեն՝ «Ալ-Մուտապալա») շարժումը, հիմնականում դրուզներից կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որի ղեկավարն է Վալիդ Ջումբլաթը, մարոնիական որոշ ուժեր և այլն:

<sup>3</sup> ՄԱԿ ԱՆ-ում ներկայացված 15 երկրները միաձայն քվեարկեցին դատարանի ստեղծման օգտին: Դատարանի կազմավորման ողջ պատասխանատվությունը դրվեց ՄԱԿ գլխավոր քարտուղարի և լիբանանյան կառավարության վրա: Որոշման համաձայն՝ դատարանի ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարների մի մասը տրամադրվելու է ՄԱԿ բյուջեից, իսկ մյուս մասը ներդրելու է լիբանանյան կառավարությունը: Դատարանի անաչառության պահպանման նպատակով այն կազմավորվելու է Լիբանանից դուրս՝ կամ Գիպրոսում, կամ Իտալիայում և կազմված է լինելու 3 դատավորից՝ 2-ն օտարազգի և 1-ը՝ լիբանանցի: Ստեղծվելու է նաև վերաքննիչ պալատ, որը կազմված կլինի 2 լիբանանցի և 3 օտարազգի դատավորներից:

<sup>4</sup> Հետաքրքրական է, որ դեռևս 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին Լիբանանում սեփական ազդեցության ուժեղացման և մարոնիների շրջանում մենիշխանության հաստատման նպատակով Միշել Աունը երկրի տարածքից սիրիական զորքերի դուրսբերման կարգախոսով «Սիրիայից ազատագրման» պատերազմ նախաձեռնեց, սակայն պարտություն կրելուց հետո ստիպված եղավ 1990թ. հոկտեմբերին լքել Լիբանանի տարածքը և հաստատվել Ֆրանսիայում: Աունը հնարավորություն ստացավ վերադառնալ Լիբանան միայն 2005թ. մայիսի 7-ին՝ նույն թվականի փետրվարի 14-ին Ռաֆիկ Հարիրիի սպանությանը հետևած զարգացումների արդյունքում Լիբանանից սիրիական զորքերի դուրսբերումից հետո:

<sup>5</sup> Հրաժարական տված նախարարներից հինգը շիական *Հիզբալլահ* շարժման անդամներ էին, իսկ մեկը քրիստոնյա էր, որ ներկայացնում էր Միշել Աունի ղեկավարած *Ազատ հայրենասիրական* շարժումը:

րի մեծ մասն աջակցություն էր հայտնում կառավարությանը: Այս իրողությունները լավագույնս ի ցույց են դնում լիբանանյան հասարակության երկփեղկվածությունը:

ՄԱԿ ԱԽ անդամները ևս մտահոգված էին լիբանանյան կառավարության վերոնշյալ որոշման օրինականությամբ: Այս առիթով կասկածներ հայտնեցին, մասնավորապես, Կատարն ու Ռուսաստանի Դաշնությունը: Սակայն ԱԽ-ում ի հայտ եկած տարաձայնությունները հնարավոր եղավ հարթել, և լիբանանյան կառավարությանը հնարավորություն տրվեց ինքնուրույն լուծել ներքաղաքական խնդիրները:

Նշենք, որ Լիբանանում քաղաքական սպանությունների գործով միջազգային դատարան ստեղծելու ՄԱԿ ԱԽ որոշումը պետք է ստանա նաև լիբանանյան խորհրդարանի, ապա նաև երկրի նախագահի հավանությունը: Սակայն այդ հարցով խորհրդարանական նիստի գումարումը մինչև օրս հետաձգվում է տարբեր պատճառներով: Շիական *Ամալ* շարժման ղեկավար և խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերիին հրաժարվում է այդ հարցի քննարկման առնչությամբ գումարել խորհրդարանի նիստ:

Սաադ Հարիրիի ղեկավարած հակասիրիական իշխող դաշինքի համար դատարանի կազմավորման հարցը սկզբունքային է: Իսկ ընդդիմադիր սիրիամետ և իրանամետ դաշինքում համագործակցող շիական *Ամալ* և *Հիզբալլահ*, ինչպես նաև *Ազատ հայրենասիրական* շարժումների համար այն անընդունելի է: Դա է պատճառը, որ վերոնշյալ ուժերը փորձում են հնարավորինս հետաձգել երկրի խորհրդարանում (որտեղ հակասիրիական դաշինքն ունի մեծամասնություն) դատարանի կազմավորման հետ առնչվող ցանկացած հարցի քննարկումը: Հարիրիի սպանության հետաքննության հարցը երկրում 2006թ. վերջին սկսված ներքաղաքական ճգնաժամի (որը սպառնում է վերաճել զինված հակամարտության) սրման հիմնական պատճառներից է:

Լիբանանում քաղաքական ճգնաժամն էլ ավելի խորացավ, երբ ի պատասխան Ֆուադ Մինիորայի այն հայտարարության, որ կառավարությունը չի պատրաստվում հրաժարական տալ, *Հիզբալլահ* շարժման նախաձեռնությամբ երկրի մայրաքաղաքի գլխավոր հրապարակում կազմակերպվեցին բազմահազարանոց ցույցեր և քաղաքացիական անհնազանդության այլ ակցիաներ:

### **«Մայրիների հակահեղափոխություն»**

2006թ. հուլիս-օգոստոս ամիսների լիբանանա-իսրայելյան վերջին պատերազմը գլխավորապես կանխորոշեց լիբանանյան իշխանությունների շրջանում առկա հակասությունները: Իսրայելի բանակի նկատմամբ հարաբերական «հաղթանակ» տանելուց հետո *Հիզբալլահ* շարժման ղեկավար Հասան Նասրալլահը 2006թ. նոյեմբերից ձեռնամուխ եղավ 2005թ. «մայրիների հեղափոխության» արդյունքում երկրի ներքաղաքական կյանքում որոշակիորեն թուլացած իր դիրքերի ամրապնդմանը: Նա պահանջեց կառավարության նախարարական աթոռների 1/3-ը՝ հետևաբար նաև գործադիր մարմնի որոշումների վրա վետո դնելու իրավունք, ինչը, սակայն, մերժվեց: Ստեղծված իրավիճակում *Հիզբալլահը* փորձեց դիմել վերջին շրջանում տարբեր վարչակարգերի (այդ թվում նաև Լիբանանում) փոփոխման համար կիրառվող տարբերակին՝ խաղաղ հեղափոխության, որ հակված ենք անվանել «մայրիների հակահեղափոխություն»:

### **Ո՞ւմ է ձեռնտու իրավիճակի անկայունությունը Լիբանանում**

Լիբանանում իրավիճակի սրումն, ինչպես միշտ, այդ երկրի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նկատմամբ համաշխարհային տերությունների և նրանց տարածաշրջանային գործընկերների միջև պայքարի սրման արդյունք է: Հատկանշական է, որ հենց վերջին շրջանում ԱՄՆ-ում ավելի հաճախակի են խոսում Մերձավոր Արևելքում կայունության հաստատման նպատակով Սիրիայի և Իրանի հետ ուղղակի շփումներ հաստատելու մասին: Այդ գաղափարի հիմնական ջատագովներն ԱՄՆ Կոնգրեսի վերջին ընտրություններում հաղթանակ տարած դեմոկրատականներն են: Եթե Վաշինգտոնի և Թեհրանի միջև մոտ ապագայում

մերձեցման հեռանկարները դեռևս տեսանելի չեն, ապա Դամասկոսն այդ ուղղությամբ արդեն իսկ որոշակի նշաններ է ցուցաբերում<sup>1</sup>:

Սիրիայի և ԱՄՆ դիրքորոշումների հնարավոր մերձեցումը, որպես հետևանք, կարող է հանգեցնել Իրանի դիրքերի թուլացմանը: Վերջինս կարող է զրկվել տարածաշրջանում իր հիմնական դաշնակցից: Այս տեսանկյունից Լիբանանում իրավիճակի սրումը որոշակիորեն բխում է Իրանի շահերից: Լիբանանում հնարավոր քաղաքացիական պատերազմի բռնկման պարագայում Վաշինգտոնի և Դամասկոսի միջև որևէ հնարավոր մերձեցումը կարող է անհնար դառնալ:

### ***Միջազգային հանրության՝ լիբանանյան ճգնաժամի կարգավորմանն ուղղված քայլերը***

Լիբանանյան ճգնաժամի կարգավորման նպատակով նախ դեկտեմբերի 2-ին այդ երկիր ժամանեցին Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարները: Հետագրքրական է, որ եվրոպական դիվանագետների հետ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված քայլեր ձեռնարկեց նաև Մաուրյան Արաբիան, ինչը նպաստեց ընդդիմադիր ուժերի ցույցերի դադարեցմանն ու քաղաքական հակասությունները փողոցից բանակցությունների մակարդակի տեղափոխելուն: Դեկտեմբերի 3-ին ճգնաժամի կարգավորման գործընթացին միացավ նաև Արաբական պետությունների լիգայի քարտուղար Ամր Մուսան:

Վերջին անգամ Արևմուտքի և Արևելքի ջանքերի նման համատեղում տեղի էր ունեցել 1990թ. հակասադամական դաշինքի ձևավորման ընթացքում: Թերևս այս անգամ համագործակցության հիմնական դրդապատճառը համեմատաբար չափավոր և ազատական Լիբանանում շիական արմատականության ակտիվացման սպառնալիքն է:

Բավական երկար ընդմիջումից հետո 2006թ. դեկտեմբերի կեսերին Ռուսաստանը ևս ստացավ Լիբանանում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում միջնորդական առաքելությամբ հանդես գալու իրական հնարավորություն: Դեկտեմբերի 14-ին Լիբանանի վարչապետ Ֆուադ Սինիորան ժամանեց Ռուսաստան: Արևմտամետ կողմնորոշմամբ աչքի ընկնող լիբանանյան վարչապետի Մոսկվա այցելությունը խիստ հետաքրքրական էր: Լիբանանյան իշխանությունները քաղաքական ճգնաժամի կարգավորման նպատակով փորձեցին օգտագործել նաև Մոսկվայի և Դամասկոսի միջև վաղուց հաստատված գործընկերային հարաբերությունները, մանավանդ որ Սինիորայի այցին հաջորդելու էր դեկտեմբերի 19-ին Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եռօրյա այցելությանը Մոսկվա:

Բեյրութում վստահ են, որ դժգոհության ալիքը կազմակերպում և ուղղորդում էին ինչպես Իրանից, այլնպես էլ Սիրիայից: Պատահական չէ, որ մայրաքաղաքի գլխավոր հրապարակում հավաքված ցուցարարների շրջանում զգալի թիվ էին կազմում սիրիական հատուկ ծառայությունների աջակցությամբ կազմավորված խմբավորումները:

Մոսկվա այցելության ընթացքում Ֆուադ Սինիորան առաջարկեց հետևյալ փոխզիջումային տարբերակը. Լիբանանի հակասիրիական կառավարությունը հրաժարվում էր Դամասկոսի հասցեին մեղադրանքներ հնչեցնելուց, իսկ Սիրիան՝ Սինիորայի կառավարությունը տապալելու փորձեր հրահրելուց<sup>2</sup>:

Մերձավորարևելյան խաղաղ կարգավորման ուղղությամբ Մոսկվայի ձեռնարկած վերջին միջնորդական առաքելությունները որևէ լուրջ հաջողություն չեն արձանագրել: Մերձավոր Արևելքում Ռուսաստանի համար ստեղծված ներկա իրողությունը միջազգային ասպարեզում սեփական նշանակությունը կարևորելու հարմար առիթ է: Թե ինչ հաջողություններ կկարողանա արձանագրել Մոսկվան, ցույց կտա ժամանակը:

<sup>1</sup> Այդ տեսանկյունից հետաքրքրական էր նոյեմբերի վերջին Սիրիայի արտաքին գործերի նախարար Վալիդ Մուալիմի Բաղդադ այցելությունը, որի ընթացքում Դամասկոսն առաջին անգամ ճանաչեց Իրաքի հետսադամական կառավարությունը:

<sup>2</sup> Մոսկվան խիստ շահագրգռված է իր հնարավոր միջնորդական առաքելությամբ: Ռուսաստանը վաղուց նպատակ է հետապնդում հրավիրել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման միջազգային համաժողով, որտեղ 1991թ. մադրիդյան համաժողովի օրինակով բանակցությունների սեղանի շուրջ կարող են հավաքվել հակամարտող բոլոր կողմերը՝ Լիբանանը, Սիրիան, հնարավոր է նաև Իրանը, Պաղեստինյան ինքնավարությունն ու Իսրայելը:



## ***Լիբանանահայերի ներկայացվածությունը քաղաքական հակադիր ճամբարներում***

Հայերը Լիբանանի խորհրդարանում ընդհանուր առմամբ ունեն 6 պատգամավորական տեղ, որոնցից 4-ը (3-ը՝ առաքելական և 1-ը՝ կաթոլիկ) ընտրվում են Բեյրութի ընտրաշրջանից, իսկ մյուս երկուսը՝ Լեռնալիբանանի և Բեքաայի ընտրատարածքից:

Երկրի օրենսդիր մարմնում Բեյրութի ընտրաշրջանից խորհրդարան անցած բոլոր 4 հայ պատգամավորներն էլ ներգրավված են Սաադ Հարիրիի ղեկավարած դաշինքում: Դրանք են Հակոբ Քասարջյանը (Ռամկավար ազատական կուսակցություն), Եղիա Ճերեճյանը (Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն), անկախ պատգամավոր Ժան Օղասափյանը և հայ կաթոլիկ Մերժ Թուրսարգայանը<sup>1</sup>:

Լեռնալիբանանի և Բեքաայի հովտի շրջաններից երկրի խորհրդարան ընտրված երկու հայ պատգամավորները ներկայացնում են ՀՅԴ-ն, որ սերտորեն համագործակցում է ընդդիմադիր ճակատում համախմբված ուժերի, հատկապես՝ Միշել Աունի ղեկավարած *Ազատ հայրենասիրական* շարժման հետ: Պատահական չէ, որ Լեռնալիբանանից ընտրված Հակոբ Բագրատունին ընդգրկված էր հենց Միշել Աունի ընտրացուցակում: Վերջին հայ պատգամավորը Ժորժ Քասարջին է, որը թեև կուսակցական չէ, սակայն սերտորեն համագործակցում է ՀՅԴ-ի հետ:

Թեև լիբանանահայ քաղաքական գործիչներն ու կուսակցություններն ըստ իրենց կողմնորոշման համագործակցում են երկրի տարբեր ուժերի և խմբավորումների հետ, այդ թվում նաև հակադիր, սակայն հայ համայնքն ընդհանուր առմամբ, իր շահերից ելնելով, փորձում է հավատարիմ մնալ դեռևս 1975թ. բռնկված քաղաքացիական պատերազմի ընթացքում որդեգրած «դրական չեզոքության» քաղաքականությանը:

### ***Հետևություններ***

1. Լիբանանում 2006թ. վերջին սրված ներքաղաքական ճգնաժամը տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային ուժերի միջև պայքարի սրման հետևանք է:
2. Քաղաքական ճգնաժամն ունի նաև ներքին պատճառներ. ա) Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման հարցում երկրի հակադիր քաղաքական ճամբարներում առկա իրարամերժ դիրքորոշումները, բ) 2006թ. հուլիս-օգոստոս ամիսների լիբանանա-իսրայելյան պատերազմում «որոշակի հաջողություններ» ունենալուց հետո *Հիզբալլահ* շարժումը փորձում է օգտագործել լիբանանյան հասարակության որոշ շրջանակներում վայելած ժողովրդականությունն ու մեծացնել քաղաքական ազդեցությունը և ներգրավվածությունը երկրի կառավարման մարմիններում:
3. Միջազգային հանրության ջանքերի համատեղմամբ 2006թ. դեկտեմբերին հնարավոր եղավ հասնել երկրում իրավիճակի ժամանակավոր հանդարտեցման: Մակայն ճգնաժամի առաջացման պատճառներն ու դրանց արդյունքում ի հայտ եկած խնդիրները մնում են չլուծված: Երկրի ընդդիմադիր ուժերն այսօր էլ սպառնում են սկսել ժամանակավորապես դադարեցված քաղաքացիական անհնազանդության միջոցառումների երկրորդ փուլը, որը ներառելու է համընդհանուր գործադուլ, ինչը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ երկրի առանց այդ էլ զգալի վնասներ կրած տնտեսության համար:

***Լիլիթ Հարությունյան***

<sup>1</sup> Հայ հեղափոխական դաշնակցությունը բոյկոտեց 2005թ. Բեյրութի ընտրությունները՝ բողոքելով գործող ընտրական օրենքի դեմ: Ըստ 2000թ. ընտրական օրենքի՝ ընտրություններում Լիբանանի խորհրդարանի պատգամավորներն ընտրվում են բոլոր դավանանքներին պատկանող լիբանանցիների ձայներով:

## ՀԿ ՍԵԿՏՈՐԸ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼՈՒԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կամ, ինչպես ընդունված է ասել, 3-րդ սեկտորի դերակատարումն օր օրի շոշափելի է դառնում: Այդուհանդերձ, հայ իրականության մեջ, հատկապես քաղաքական որոշումների կայացման գործընթացում, դեռևս չկա մշակված մոտեցում, որի նպատակը կլինի ՀԿ-ների միջոցով առաջադրել և գտնել արտաքին և ներքին քաղաքականության հարթությունում առկա խնդիրների հնարավոր լուծումներ: Մինչդեռ այսօր հենց այս սեկտորին է վերապահված, այսպես կոչված, «փափուկ ուժի» (*soft power*) կիրառմամբ քաղաքական խնդիրների առաջնությունը, ինչն իրագործվում է «Պետություն – ՀԿ սեկտոր» սերտ համագործակցությամբ՝ կոնկրետ ծրագրերի համատեքստում:

***ՀԿ դաշտի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ՀԿ-ները հանդես են գալիս ոչ միայն գլոբալիզացիայի միջնորդի, այսինքն՝ ունիվերսալ արժեքների կրողի, արտահանողի կամ ներմուծողի դերում: ՀԿ-ները, ունենալով ճկուն ցանցային կառուցվածք, կարևոր դերակատարում ունեն ազգային և այլ քաղաքական խնդիրների գործում:***

Նման մոտեցումը նորություն չէ և լայնորեն կիրառվում է արևմտյան (ԱՄՆ, Եվրոպա) երկրների, ինչպես նաև այլ «ուժի կենտրոնների» կողմից<sup>1</sup>:

Այս մարտավարությունը բավական արդյունավետ է, քանի որ այն, ի տարբերություն միջնադարում կիրառվող քաղաքականության առաջնական արյունալի ու բռնի մեթոդների, արտաքինապես մարդասիրական բնույթ է կրում և անցկացվում է «զարգացող երկրների օժանդակության ծրագրերի» խորագրի ներքո:

Փորձենք Լեհաստանի օրինակով ներկայացնել պետության և ՀԿ սեկտորի միջև բավական արդյունավետ և անընդհատ զարգացող համագործակցությունն ու կիրառվող մեխանիզմները: Այս օրինակն ուշագրավ է նաև այն առումով, որ Լեհաստանը ստանձնել է ոչ միայն Եվրոպայի և ԱՄՆ-ի, այլև ամբողջ Արևմուտքի ու հետխորհրդային երկրների միջև երկխոսության զարգացմանը նպաստող և առանցքային դերակատարությամբ հանդես եկող երկրի առաքելություն<sup>2</sup>: Մեզ համար Լեհաստանի փորձն արժեքավոր է նաև արտերկրում գործող լեհական ՀԿ-ների հետ տարվող աշխատանքների առումով:

### ***Լեհաստանի ՀԿ սեկտորը***

2005թ. պաշտոնական տվյալներով՝ Լեհաստանում 3-րդ սեկտորը ներառում է շահույթ չհետապնդող 109 հազար սուբյեկտներ (հասարակական կազմակերպություններ, ֆեդերացիաներ, հիմնադրամներ, արհմիություններ, ծնողական կոմիտեներ և այլն):

Վերջին շրջանում ակտիվացել են Լեհաստանի և Հարավային Կովկասի երկրների միջև կապերը թե՛ պետական մակարդակով, թե՛ հատկապես ՀԿ սեկտորի միջոցով:

Այսօր արդեն ակնհայտ է, որ նախկին սոցիալիստական ճամբարի երկրներից (Վարշավյան համաձայնագրի երկրներ) Լեհաստանին տրված է առաքելություն. հետխորհրդային անցումային երկրներում տարածել լեհական հաջողված փորձը՝ ժողովրդավարությանն ու ազատ շուկայական տնտեսությանն այդ երկրների անցումն ապահովելու համար:

<sup>1</sup> Օրինակ՝ Ռուսաստանը, որտեղ Վ.Պուտինի վարչակազմը մեծ ուշադրություն է դարձնում այս սեկտորին և տարեցտարի ավելացնում դրամաշնորհային գումարները, ծրագրային-թեմատիկ և աշխարհագրական ընդգրկումությունը: Այլ հարց է, թե Ռուսաստանում այդ ամենն ինչպես է իրականացվում (առկա են բազմաթիվ խնդիրներ): Բանն այն է, որ այս դաշտում չափազանց կարևոր է նաև աշխատանքների կազմակերպման մի շարք սկզբունքներին հավատարիմ մնալը (օբյեկտիվություն, թափանցիկություն, արդարություն և այլն), այլպես հնարավոր է հակառակ էֆեկտ ունենալ: Բայց Ռուսաստանի օրինակն առանձին քննարկման կարիք ունի և դուրս է այս հոդվածում քննարկվող խնդիրների շրջանակներից:

<sup>2</sup> Առավել մանրամասն տե՛ս *Government information on Polish foreign policy in 2006 presented at the session of the Sejm on February 15, 2006 by the Minister of Foreign Affairs of the Republic of Poland, Stefan Meller*, <http://www.mfa.gov.pl/Policy,2155.html>

Հետաքրքիր է, որ այս առաքելությունն (կամ պետական-քաղաքական պատվերը) իրականացվում է մեծ մասամբ լեհական ՀԿ-ների կամ հիմնադրամների միջոցով, ինչը ձեռնառու է մի քանի առումներով: Նախ՝ Լեհաստանի 3-րդ սեկտորը (համեմայնդեպս այն հատվածը, որը դրամաշնորհներով իրականացնում է այդ ծրագրերը) դառնում է միջնորդ Լեհաստանի կառավարության և այլ երկրներում գործող ՀԿ-ների միջև, ինչը մի կողմից՝ նպաստում է բուն Լեհաստանում 3-րդ սեկտորի զարգացմանը, մյուս կողմից՝ լեհական ՀԿ-ների և հիմնադրամների դիրքերը՝ որպես դոնոր երկրի ներկայացուցիչ, զգալիորեն ամրապնդվում են, և երրորդ՝ Լեհաստանում ձևավորվում է պետականամետ ՀԿ-ների հզոր ցանց: Այս մարտավարության հաջորդ դրական կողմն այն է, որ պետական սեկտորն իր պարտականությունների մի մեծ հատված, այն է՝ Լեհաստանի իմիջն արտերկրում (հատկապես Լեհաստանին սահմանակից երկրներում) բարձրացնելու, լեհական փորձը տարածելու, արևմտամետ (հաճախ՝ լեհամետ) գործիչներ պատրաստելու և շատ այլ խնդիրների իրականացումը և դրանց հետ կապված ամբողջ վարչարարությունը, դրվում է ՀԿ աշխատակիցների ուսերին: Բացի այդ, այս ճանապարհով մեծ ֆինանսական հոսքեր են ապահովվում Արևմուտքից Լեհաստան, որոնք շրջանառվում են երկրի ներսում (բանկային փոխանցումներ, աշխատավարձերից գոյացած սոցվճարներ, հյուրանոցային բիզնես և այլն):

Եթե հետևենք վիճակագրական տվյալներին, կտեսնենք, որ տարեցտարի ավելանում են Լեհաստանի կողմից արտերկրում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի թե՛ քանակը, թե՛ թեմատիկ և աշխարհագրական ընդգրկունությունը, թե՛ հատկացվող գումարների չափը:

Հատկանշական է, որ պետական դրամաշնորհային ֆոնդի զգալի մասն իրականացվում է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության կողմից, ինչը փաստում է դրանց քաղաքական ենթատեքստի մասին:

Սակայն Լեհաստանի արտաքին գործերի նախարարությունը հիմնականում իրականացնում է համաֆինանսավորում և համագործակցում է այլ դոնորների հետ, որոնց մեջ ամենաակտիվն են Եվրախորհուրդը, Եվրամիությունը, ինչպես նաև ամերիկյան ու կանադական մի շարք հիմնադրամներ:

Միայն արտգործնախարարության կողմից լեհական ՀԿ-ներին հատկացվող դրամաշնորհային ֆոնդը 2005 թ. համեմատ 2006-ին աճել է մոտ 3 անգամ (2005թ. կազմել է 10.6 մլն զլոտ՝ մոտ \$3.5 մլն, իսկ 2006-ին՝ 30 մլն զլոտ՝ մոտ \$10 մլն):

2005թ. Լեհաստանի արտգործնախարարությունը հրապարակել էր այն երկրների ցանկը, որոնք գերակա են իրենց համար և գտնվում են իրենց հետաքրքրությունների ու շահերի տիրույթում: Դրանք են Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, Վրաստանը, Իրաքը, Աֆղանստանը, Անգոլան, Վիետնամը և Պաղեստինյան ինքնավարությունը: Նախարարության կողմից իրականացվող օժանդակության ծրագրերը լեհական ՀԿ-ների միջոցով ուղղվում են նշված երկրներ՝ դրանցում բարեփոխումներ իրականացնելու համար:

2005թ. դրամաշնորհների առյուծի բաժինը հասել է Ուկրաինային՝ քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության կայացմանն աջակցող ծրագրերի շրջանակներում: Միայն Լեհաստանի արտգործնախարարության խողովակներով Ուկրաինայում իրականացված ծրագրերի ընդհանուր գումարը 2005թ. կազմել է 7.41 մլն զլոտ (մոտ \$2.47 մլն), որը կազմել է ընդհանուր դրամաշնորհային ֆոնդի մոտ 40%-ը:

Ինչպես տեսանք, գերակա երկրների ցանկում Հարավային Կովկասի հանրապետություններից ընդգրկված էր միայն Վրաստանը, որտեղ իրականացվել են 431.882 զլոտ (մոտ \$144 հազ.) ընդհանուր արժողությամբ տարբեր ծրագրեր<sup>1</sup>:

Այդուհանդերձ, 2006-ին այդ ցանկը վերանայվել է, և ավելացել են մի քանի երկրներ՝ ՌԴ, Հայաստան, Ադրբեջան, Կենտրոնական Ասիայի հանրապետությունները: 2006-ին կտրուկ աճել է նաև այլ երկրներում օժանդակության ծրագրերով նախատեսված դրամաշնորհային ֆոնդը՝ մոտ 5 անգամ (18 մլն զլոտից հասնելով 85 մլն զլոտի, այսինքն՝ մոտ \$29 մլն):

<sup>1</sup> Նշենք, որ 2005թ. նախարարության հաշվետվության մեջ հիշատակվում են նաև Հայաստանը (որտեղից կազմակերպվել է լրագրողների ուսուցողական այց Լեհաստան \$13 հազ. արժողությամբ ծրագրի շրջանակներում) և Ադրբեջանը (փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ երիտասարդների այցելություն Լեհաստան):

Ըստ նախնական դիտարկումների, 2007թ. Հարավային Կովկասում (մասնավորապես՝ Հայաստանում) կավելանան իրականացվող ծրագրերի թիվը և գումարային ներդրումները, քանի որ 2006թ. Լեհաստանի արտգործնախարարության համաֆինանսավորմամբ իրականացված մի շարք ծրագրերի շնորհիվ ակտիվացել են լեհական և հայաստանյան ՀԿ-ների փոխշփումները, լեհական մի շարք հիմնադրամներ պատրաստակամություն են հայտնել Հայաստանի ՀԿ-ների միջոցով համատեղ ծրագրեր իրականացնել, հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման, կրթության օժանդակության և այլ ուղղություններով:

### ***Գործունեությունը լեհական համայնքներում***

Մեզ համար առավել ուսանելի է Լեհաստանի պետական մակարդակով տարվող քաղաքականությունը լեհական համայնքներում, որը նույնպես իրականացվում է ՀԿ սեկտորի միջոցով: Լեհաստանի բնակչությունը 38 մլն է, բայց լեհեր ապրում են նաև արտերկրում. տարբեր հաշվարկներով՝ 14-17 մլն: Լեհաստանը (ինչպես և Հայաստանը) նույնպես արտերկրում ապրող լեհական համայնքներում լեհական ինքնությունը, լեզուն, մշակույթը, ազգային նկարագիրը պահպանելու խնդիր ունի: Այս խնդրի առաջնորդումն իրականացվում է Լեհաստանի սահմաններից դուրս գործող լեհական ՀԿ-ների կոալիցիայի միջոցով:

Այս ծրագիրը («*Ձագրանիցա Գրուպ*») ֆինանսավորվում է «Լեհ-ամերիկյան Ազատության հիմնադրամի» կողմից, որը ստեղծվել է ԱՄՆ-ում և որի մշտական նստավայրը 2000-ից Վարշավայում է: Հիմնադրամի տնօրենների խորհրդի կազմի մեջ են նշանավոր գործիչներ Ջ.Բժեզինսկին, Լեհաստանում ԱՄՆ դեսպանը, ԱՄՆ-ում Լեհաստանի նախկին և ներկա դեսպանները և այլք: Իր գործունեության ընթացքում հիմնադրամն այս ուղղությամբ իրականացրել է \$33 մլն արժողությամբ տարբեր ծրագրեր: Դրանց հիմնական նպատակն է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության և Լեհաստանից դուրս գործող լեհական ՀԿ-ների միջև փոխհարաբերությունների անընդհատականության ապահովումն ու սերտացումը: Այս համատեքստում իրականացվում են ակտիվ շփումներ, տեղեկատվության փոխանակում, մշակվում են ընդհանուր դիրքորոշումներ առանցքային հարցերի շուրջ, Լեհաստանի արտգործնախարարության կողմից այդ ՀԿ-ների աշխատանքները որոշակիորեն ուղղորդվում են, այսինքն՝ ծրագիրը հնարավորություն է տալիս Լեհաստանի պետական շահերի մշտական ներկայացվածությունն ապահովել այն երկրներում, որտեղ լեհեր են ապրում: Այս կոալիցիայի անդամ ՀԿ-ները պետք է ընդունեն մի քանի սկզբունքներ և իրենց գործունեության ընթացքում հետևեն դրանց. օրինակ՝ 10-րդ դրույթում նշվում է. կոալիցիայի անդամ ՀԿ-ները պետք է ձգտեն ձևավորել Լեհաստանի դրական իմիջն արտասահմանում և համագործակցեն արտերկրում Լեհաստանի դիվանագիտական պաշտոնյաների հետ: Այս նպատակների իրագործման համար արտերկրի ՀԿ-ները ստանում են ֆինանսական աջակցություն հիմնականում Լեհաստանի դեսպանատների միջոցով (օրինակ, գործունեության միայն առաջին տարում՝ 2000թ., Ուկրաինայում Լեհաստանի դեսպանատան դրամաշնորհային ֆոնդը կազմել է ավելի քան \$150 հազ.):

Այսպիսով, կարելի է ասել, որ Լեհաստանն իր պետական շահերի համատեքստում կարողանում է սերտորեն համագործակցել ՀԿ սեկտորի հետ: Դա հնարավոր է դարձել ոչ միայն շոշափելի ֆինանսական ներդրումների, այլև «Պետություն – ՀԿ սեկտոր» համագործակցության անհրաժեշտության և առավել արդյունավետության խոր գիտակցման ու մշակված ծրագրային մոտեցման շնորհիվ:

***Թամարա Վարդանյան***  
***«Նորավանք» հիմնադրամ***

# ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ԱՄՆ

ԱՄՆ-ում հայտնված առաջին հայր **Հովհաննես Մարտիրոսյանն** էր (կամ Ջոն Մարտինը): 1618թ. Վիրջինիա ներգաղթածների մեջ նա գրանցվել է որպես Լոնդոնի Ջեյմս-թաուն թաղամասի անդամ, և նրան տրվել է 96 ակր (1 ակրը=4060 մ<sup>2</sup>) հողատարածք: Ընդ որում, գրանցման մեջ նշվել է ազգային պատկանելությունը՝ *John Martin the Armenian*:

1650թ. Վիրջինիայի կառավարիչ Էդուարդ Դիգսը, ցանկանալով հիմնել շերամաբուծություն ու մետաքսի արտադրություն, իր ծախսերով Վիրջինիա է բերում հայ **Գևորգին**: Սակայն նահանգում լայն թափով զարգացում է ապրում ծխախոտի մշակությունը, ինչը Գևորգին դրդում է վերադառնալ հայրենիք: Բայց Վիրջինիայի վարչակազմը հայ Ջորջին՝ Գևորգին սիրաշահելու նպատակով նվիրում է 4000 ֆունտ ծխախոտ, որպեսզի նա չմեկնի և շարունակի զբաղվել շերամաբուծությամբ:

Այս առաջին ծանոթություններից հետո հայ-ամերիկյան փոխադարձ շփումներում տիրում է ավելի քան մեկուկեսդարյա դադար: Լռությունը խախտվում է XIXդ. սկզբներին, երբ Արևելքում քարոզչական լայն գործունեություն է սկսում ծավալել ամերիկյան բողոքական եկեղեցին: 1818-1822թթ. կրոնական հողի վրա վերսկսվում են հայ-ամերիկյան փոխհարաբերությունները. Արևմտյան Հայաստանի Բեբեք գյուղում բացվում է բողոքական վարժարան, և շուտով այդպիսի հաստատություններ հիմնվում են բազմաթիվ հայաբնակ վայրերում:

Նոր ժամանակների առաջին ամերիկահայը 16-ամյա պոլսեցի **Խաչատուր Ոսկանյանն** էր, որը 1834թ. ամերիկյան միսիոներների հովանավորությամբ մեկնում է Նյու Յորք և 6 տարի ուսանում այնտեղ: Այս երիտասարդի մեջ զուգակցվում էին ամերիկացու ազատախոհությունն ու թեթևամտությունը և հայի ազգասիրությունը: Նա աշխատակցում է «Նյու Յորք հերալդ» թերթում, որի էջերում «բացահայտում» է հայի էությունը՝ նրան անվանելով փոքր Ասիայի յանկի: Հետագայում Խ.Ոսկանյանը որոշ ժամանակով ստանձնում է Թուրքիայի հյուպատոսի, ապա՝ Նյու Յորքի Մամլո ակումբի նախագահի պարտականությունները:

Խ.Ոսկանյանն արևմտահայ Թոփհանեյանի և արևելահայ Մանգասարյանի հետ կազմեց մի ծրագիր, համաձայն որի ԱՄՆ-ում պիտի հիմնվեր «Նոր Անի» անվամբ հայկական քաղաք, ընդ որում՝ սթրիթները պետք է կրեին պատմական Հայաստանի բնակավայրերի անվանումները, իսկ ավենյուները՝ իրենց և այլ ներգաղթողների ազգանունները: Խ.Ոսկանյանի քարոզչությունն սկսեց արդյունք տալ, և պատահական չէ, որ առաջին արտագաղթողները նրա համերկրացի պոլսեցիներն էին:

**Առաջին փուլը (1834-1867թթ.)**՝ ամերիկահայ համայնքի սաղմնավորման շրջանը, աչքի էր ընկնում տարերայնությամբ: Այսպես, երկրորդ հայրը՝ **Մենեքերիմ Տեր-Մինասյանը**, 1837թ. ավարտեց Պրինսթոնի համալսարանը և դարձավ **ամերիկահայ առաջին բժիշկը**: Իսկ երրորդը՝ բողոքական միսիոների սպասավոր **Թադևոսյանը**, որն սկզբում «վիթխարի» աշխատավարձ էր ստանում՝ ամսական կես դոլար, 1841-ից Նյու Յորքում սկսեց զբաղվել ռահաթ լոխումի (ֆիք փեսո՝ թզի խմոր) պատրաստմամբ, երկար տարիների ընթացքում մեծ հարստություն դիզեց, բայց արկածախնդրական ձեռնարկների մեջ մտնելու պատճառով սնանկացավ: Հայտնի են նաև մի հայ, որը 3 տարի ապրեց մորմոնների մոտ ու ևս մեկը, որը դարձել էր կոմբոյ:

Սակայն այս շրջանի ամենանշանավոր մարդկանցից մեկն, անշուշտ, **Քրիստափոր Մերոբյանն** էր: Նա 1843թ. եկավ Նյու Յորք, եղավ սպասավոր, հետո ախոռապան ու ձիաբույժ, ապա 1848-ին ավարտեց Յելի համալսարանը և **հորինեց այսօրվա ամերիկյան դոլարի կանաչ գույնի բաղադրությունը**: (Մինչ այդ դոլարն ուներ դեղին գույն և հեշտությամբ կեղծվում էր: Նա \$6000-ով իր գյուտի մենաշնորհը վաճառեց ամերիկյան կառավարությանը, վերադարձավ Կ.Պոլիս և պաշտոն ստացավ Թուրքիայի դրամահատարանում):

Բնութագրելով ամերիկահայության առաջին հոսքի էությունը՝ կարելի է փաստել, որ այն դասական իմաստով գաղթականություն չէր. դրանք 50-60 ուսանողներ, արհեստավորներ ու վաճառականներ էին, որոնց զգալի մասը վերադարձավ բնօրրան, հիմնականում՝ Կ.Պոլիս և Խարբերդ:

**Երկրորդ շրջանը (1867-1896թթ.)** կարելի է բնորոշել որպես ինքնահաստատման փուլ: Մինչև 1875-ական թթ. հայերը հիմնականում ապրում և աշխատում էին Նյու Յորքում ու շրջակայքում, հետո աստիճանաբար սկսեցին սփռվել նահանգներով: 1880-ական թթ. հիմնվում են Մասաչուսեթսի նահանգի Բոստոն և Ուորչեսթեր (Ուստր) քաղաքների համայնքները: 1880թ. Ուստրում բնակվում էին մի քանի տասնյակ հայեր, որոնց թվում էր և կարպետի գործարանատեր, պոլսեցի **Թովմաս Նշանյանը** (նրա եղբայր **Օնիկ Նշանյանը** 1910-ական թթ. Սան Դիեգոյում դարձավ **առաջին հայ միլիոնատերերից մեկը**): 1888թ., երբ հայոց թիվը Ուստրում հասավ մի քանի հարյուր հոգու (ամբողջ ամերիկահայության թիվը 1200 էր), սկսվեց եկեղեցաշինության գործընթաց: Ի վերջո, ԱՄՆ 25 քաղաքների հայերի դրամահավաքի և նյույորքաբնակ խոշոր գորգավաճառ Հովի. Թավշանճյանի ու փաստաբան Գյուլբենկ Գյուլբենկյանի նվիրատվությունների շնորհիվ \$9460-ով **1890թ. կառուցվեց ամերիկահայոց առաջին եկեղեցին՝ Ուստրի Սբ Փրկիչը** (այդ գումարի մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ հոգևոր հովիվ Հովսեփ Ծ.Վրդ Սարաջյանի տարեկան ռոճիկը \$500 էր):

Երկրի արևելքին զուգընթաց, հայերն սկսեցին «նվաճել» նաև արևմուտքը, ի մասնավորի՝ Կալիֆորնիան: 1880-1890թթ. հայկական համայնքներ են սաղմնավորվում Ռոդ Այլենդ, Յուտա, Վաշինգտոն, Քոնեքթիկուտ, Մասաչուսեթս, Նյու Ջերսի, Վիսկոնսին նահանգների բազմաթիվ քաղաքներում:

1894-1896թթ. համիդյան կոտորածներից հետո ամերիկահայության թիվն ավելացավ, որով սկսվեց **երրորդ՝ 1897-1915թթ. շրջանը**: Ըստ ԱՄՆ ներգաղթի դեպարտամենտի պաշտոնական տվյալների՝ 1900-1910թթ. երկիր ներգաղթեց 25.824 հայ, մեծ մասամբ՝ Թուրքիայից:

Ուշագրավ է Ֆրեզնոյից 42 մղոն (1 մղոն=1,609կմ) հեռավորության վրա գտնվող միակ հայանուն քաղաքի՝ Եդեմի (*Yettam*) գաղթօջախի հիմնումը: Բնակավայրի նախկին անվանումը Լոուել էր, ուր ապրում էր 5 ամերիկացի: Շուտով քաղաքը վերածվեց գրեթե բացառապես հայերով բնակեցված մի վայրի, և, բնակիչների խնդրանքով, ամերիկյան կառավարությունը քաղաքը վերանվանեց Եդեմ:

ԱՄՆ-ում հայոց առևտրատնտեսական ներկայությունն սկսվում է հենց առաջին շրջանից, և առաջին ամերիկահայ վաճառականը պոլսեցի **Սարգիս Մինասյանն** էր, որը բնակություն հաստատեց Բրուքլինում ու երկար տարիներ ամերիկյան ապրանքներ արտահանեց Թուրքիա: Ազգասեր այս մարդը 1856-1866թթ. իր տարեկան եկամտի կեսը, իսկ դրանից հետո մինչ ի մահ (1905թ., Նյու Յորք)՝ մեկ երրորդը նվիրաբերեց զանազան ազգանպաստ ձեռնարկների:

Նրան հաջորդում են գլյուտինիացի **Սարգիս Փափագյանը** (առևտրով էր զբաղվում Թրոյում), տիգրանակերտցի **Ասլան Սահակյանը** (1862-ից Ֆիլադելֆիայում վաճառական էր ու կալվածատեր, \$85 հազար է կտակել ազգային բարեգործության համար), մարաշցի **Հակոբ և Հարություն Իսկյան** եղբայրները (մեկը՝ Ջերսի Սիթի Հայցում, մյուսը՝ Նյու Յորքում 1867-ից հիմնել են գորգի արտադրություն), մշեցի **Մելքոն Սարգսյանը** (1871-ին Նյու Յորքում հիմնել է կարպետի գործարան, որի սենյակներից մի քանիսը նորեկ ազգակիցների համար վերածել էր անհատույց հյուրանոցի):

1878թ. Փրովիդենսում (Ռոդ Այլենդի նահանգ) առևտրով են զբաղվում տասնյակ հայեր: 1894թ. այստեղ հիմնվում է **առաջին համայնքային կառույցներից մեկը՝ «Ազգային տնտեսական միությունը»**, որի նպատակն էր նպաստել հայոց տնտեսական, մտավոր ու ֆիզիկական զարգացմանը: 1910թ. Փրովիդենսի 2500 հոգանոց գաղթօջախում կային շուրջ 150 մանր վաճառական, 10 գործարանատեր (5-30 բանվորով) և 40 կալվածատեր (միայն անշարժ գույքի արժեքը կազմում էր \$92.680):

Նույն նահանգի Նյու Փորթ քաղաքում խարբերդցի **Պետրոս և Հովհաննես Գազանճյան** եղբայրները 1884թ. հիմնում են **առաջին ամերիկահայ առևտրային ընկերությունը**, որն զբաղվում էր գորգերի և արևելյան ասեղնագործ իրերի վաճառքով:

Ի տարբերություն արևելյան ափի, ուր հայոց բիզնեսը հիմնականում առևտրաարդյունաբերական էր, արևմուտքում՝ Կալիֆորնիայում, հայերի տնտեսական հենքը հողի սեփականությունն էր ու գյուղատնտեսությունը: Այսպես, 1913թ. Ֆրեզնոյում 326 հայեր (այս թվի մեջ մտնում են նաև կանայք ու երեխաներ) տիրում էին 12.816ակր հողատարածքի և արտադրում տեղական չամիչի 1/5-ը:

1915թ. Հայոց ցեղասպանության հետևանքով կտրուկ աճեց ԱՄՆ ներգաղթողների թիվը, որոնք դժբախտ տարագիրներ էին և չունեին ոչ դրամագույն, ոչ վաճառականական հմտություններ: Սակայն նրանք արագորեն հարմարվեցին նոր պայմաններին: 1925թ. տպագրված մի ցուցակում ընդգրկված են ԱՄՆ 23 նահանգների 91 քաղաքների 5000 հայեր: Եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակ ԱՄՆ-ում հայության թիվը շուրջ 30.000 էր, իսկ ցանկում զետեղված են միայն տղամարդիկ՝ զբաղմունքի տեսակի ու հասցեի նշումով, ապա տրամաբանորեն կունենանք ամբողջ ամերիկահայության հավաստի ու ճշգրիտ պատկերը:

Ցուցակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ տղամարդկանց 2/5-ը ԱՄՆ-ում զբաղվում էր առևտրատնտեսական գործունեությամբ: Ամերիկահայոց ամենատարածված առևտրատնտեսական գործունեությունը **գորգավաճառությունն** էր: Այդ բիզնեսով զբաղվում էին 332 անձ և 29 ընկերություն, ընդ որում՝ միայն 22 անձ և 4 ընկերություն գործում էին Նյու Յորքի 5-րդ ավենյուի 225 հասցեում: ԱՄՆ էր ներկրվում տարեկան \$5 մլն-ի գորգ, դրա 3/4-ը հայերի ձեռքում էր:

Հայերը զբաղվում էին նաև **ակնագործությամբ և ակնավաճառությամբ**՝ 41 անձ, **ճիախոտարդյունաբերությամբ և վաճառքով**՝ 28 անձ, **անշարժ գույքի առքուվաճառքով**՝ 77 անձ և 2 ընկերություն: Կային **գործարանատերեր**՝ 23 անձ, **հյուրանոցատերեր**՝ 45 անձ, **ռեստորանատերեր**՝ 76 անձ և 1 ընկերություն:

Հավելենք նաև, որ 1912թ. տվյալներով այլ ազգերի համեմատ հայերի մոտ սնանկության ամենացածր ցուցանիշն էր՝ 4-5 %:

*Խաչատուր Դադայան*  
*«Նորավանք» հիմնադրամ*